



Հայաստանի տնտեսական և սոցիալական խնդիրները խորհրդարանական ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի ներկայացուցիչների մամուլի ասուլիսներում

(ըստ դիտարկման արդյունքների)

Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն ս. թ. փետրվարի 6-ից ապրիլի 29-ը իրականացրեց 2017 թվականի ապրիլի 2-ի խորհրդարանական ընտրություններին մասնակցող 9 կուսակցությունների ու դաշինքների մամուլի ասուլիսների դիտարկում (մոնիտորինգ): Ըստ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2017թ. փետրվարի 17-ին հրապարակած ցուցակի՝ այդ քաղաքական ուժերն են՝ «ԵԼԲ» կուսակցությունների դաշինքը, «Ազատ դեմոկրատներ» կուսակցությունը, «Հայկական վերածնունդ» կուսակցությունը, «Ծառուկյան» կուսակցությունների դաշինքը, «Կոնգրես-ՀԺԿ» կուսակցությունների դաշինքը, Հայաստանի հանրապետական կուսակցությունը, Հայաստանի կոմունիստական կուսակցությունը, «Օհանյան-Բաֆֆի-Օսկանյան» կուսակցությունների դաշինքը, «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցությունը:

Ուսումնասիրության նպատակն էր պարզել, թե քաղաքական ուժերի ներկայացուցիչների նախընտրական մամուլի ասուլիսներում ինչ մաս են կազմում երկրի տնտեսական ու սոցիալական խնդիրները և դրանց ինչ լուծումներ են առաջարկվում: Դիտարկումը բաղկացած էր 3 փուլից, յուրաքանչյուրը՝ 27 օր. նախքան պաշտոնական քարոզարշավը, բուն արշավի ժամանակահատվածը, հետընտրական շրջանը: Համապատասխանաբար՝ առաջին փուլը ներառում էր փետրվարի 6-ից մարտի 4-ը, երկրորդը՝ մարտի 5-ից 31-ը, երրորդը՝ ապրիլի 3-ից 29-ը: Ուսումնասիրության 3 փուլերի տվյալների հիման վրա իրականացվել է համեմատական վերլուծություն:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Դիտարկման առարկան կուսակցությունների ու դաշինքների նախընտրական մամուլի ասուլիսներն էին, ավելի ստույգ՝ դրանցում տնտեսական և սոցիալական թեմաներին նվիրված հատվածները, որոնք առանձնացվել են բանախոսների ելույթներից և ենթարկվել են քանակական և որակական վերլուծության: Բացի դա,

թեն առանց այդպիսի վերլուծության, արձանագրվել են նաև ասուլիսներում արձարծված բոլոր այլ թեմաները:

Ըստ դիտարկման մեթոդաբանության՝ տնտեսական հարցերը բաժանվել են հետևյալ 3 բաղկացուցիչների.

- էկոնոմիկա. արդյունաբերություն/գյուղատնտեսություն/տուրիզմ/SS ոլորտ և այլն (ընթացիկ քաղաքականություն և ներկա իրավիճակ),
- ՀՀ տնտեսական ռազմավարությունը (տեսլականը),
- արտաքին տնտեսական կապերը (ԵՍՄ/Ռուսաստան, ԵՄ, Վրաստան, Իրան):

Սոցիալական թեմաները բաժանվել են հետևյալ 4 բաղկացուցիչների.

- զբաղվածություն/գործազրկություն,
- աշխատանքային իրավունքներ,
- առողջապահություն,
- կենսաթոշակային համակարգ/սոցիալական նպաստներ/ավանդների վերադարձ/խոցելի խմբերի օժանդակություն:

Քանակական վերլուծություն իրականացնելիս դիտարկողները վեր են հանել, թե ուսումնասիրվող յուրաքանչյուր ասուլիսի ընթացքում որքան տեղ է տրվել տնտեսական և սոցիալական թեմաներին: Այդ մասերը բանախոսների ելույթներում չափվել են վայրկյաններով/րոպեներով: Որոշ դեպքերում բացարձակ թվերը վերածվել են տոկոսների՝ դրանց հարաբերակցությունը առավել ակնառու ներկայացնելու համար:

Արձարծված տնտեսական և սոցիալական հարցերի **որակական վերլուծությունը** մոնիտորինգային խումբն իրականացրել է հետևյալ չափորոշիչներով.

- ներկա իրավիճակի ընդհանուր գնահատականը,
- վերհանվող խնդիրները,
- առաջարկությունների առկայությունն ու դրանց բովանդակությունը:

Ուսումնասիրվող մամուլի ասուլիսներին հնչած ելույթների վերլուծության համար կիրառվել է հետևյալ քայլերի հաջորդականությունը.

1. ԽԱՊԿ-ը կապ է հաստատել ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի և մայրաքաղաքի մամուլի կենտրոնների ու ակումբների հետ և ճշտել կայանալիք ասուլիսների գրաֆիկը,
2. դիտարկման խմբի անդամները ներկա են գտնվել այդ ասուլիսներին և ձայնագրել բանախոսների ելույթները,
3. այնուհետև այդ ձայնագրություններից առանձնացվել են տնտեսական և սոցիալական խնդիրներին վերաբերող հատվածները, դրանք ենթարկվել են քանակական ու որակական վերլուծության՝ վերոհիշյալ չափորոշիչներով,
4. ասուլիսների ուսումնասիրության ընթացքում արձանագրվել են նաև բանախոսների արձարծած այլ թեմաները և կազմվել է դրանց ցանկը:

ՄԱՍՈՒԼԻ ԱՍՈՒԼԻՄՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1. Քաղաքական ուժերի մասնակցությունը ասուլիսներին

Դիտարկման առաջին փուլում ուսումնասիրվել է խորհրդարանական ընտրություններին մասնակցող կուսակցությունների ու դաշինքների ներկայացուցիչների 63 մամուլի ասուլիս: Դրանցից 31-ին մասնակցել է 2 և ավելի գործիչ, և այդ պատճառով ստորև բերված աղյուսակներում և շարադրանքում երևում է, որ մասնակիցների ընդհանուր թիվը գերազանցում է ասուլիսների քանակը: Այդ 31 ասուլիսներից 16-ը բանավիճային էին, այսինքն՝ դրանց մասնակցում էին տարբեր կուսակցությունների ու դաշինքների ներկայացուցիչներ, մյուս 15 դեպքերում մասնակիցները նույն նախընտրական ճամբարից էին: Իսկ ընդհանուր առմամբ 63 մամուլի ասուլիսներում ելույթ է ունեցել 114 քաղաքական գործիչ:

Ուսումնասիրության երկրորդ փուլում, այսինքն՝ պաշտոնապես հայտարարված նախընտրական քարոզարշավի 27 օրերի ընթացքում, արձանագրվել է նույն կուսակցությունների ու դաշինքների ներկայացուցիչների 110 մամուլի ասուլիս, որոնցից 58-ին մասնակցել է 2 և ավելի գործիչ: Այդ 58 ասուլիսներից 37-ը բանավիճային էին, իսկ 21-ում մասնակիցները նույն կուսակցությունից կամ դաշինքից էին: Ընդհանուր առմամբ՝ 110 մամուլի ասուլիսներում ելույթ է ունեցել 201 քաղաքական գործիչ:

Ուսումնասիրության երրորդ փուլում տեղի է ունեցել խորհրդարանական ընտրություններին նվիրված 9 ասուլիս, որոնցում հանդես են եկել վերոհիշյալ 9 կուսակցություններից ու դաշինքներից 5-ի՝ ՀՀԿ-ի, «Ելքի», «Ազատ դեմոկրատների», ՕԲՕ-ի, ՀԿԿ-ի 15 ներկայացուցիչներ: Այս հետընտրական ասուլիսներից 5-ին մասնակցել է 2 և ավելի գործիչ, սակայն դրանցից միայն մեկն է եղել բանավիճային, մնացած 4-ում բանախոսները նույն քաղաքական ճամբարից էին:

Այսպիսով, դիտարկման երեք փուլերի ընթացքում տեղի է ունեցել 182 նախընտրական ասուլիս: Դրանցից 94-ին մասնակցել է 2 և ավելի գործիչ, ընդ որում՝ 54 ասուլիս եղել է բանավիճային, իսկ 40-ի մասնակիցները նույն քաղաքական ճամբարից էին: Ասուլիսներին հանդես եկած բանախոսների ընդհանուր թիվը 330-ն է:

Առավել հետաքրքրական է, թե այս ընդհանուր թվերում ինչ մաս է կազմել յուրաքանչյուր կուսակցություն և դաշինք: Իրականացված դիտարկումը հնարավորություն է տվել բացահայտել քաղաքական ուժերի ակտիվության մակարդակը, մասնավորապես՝ որքանո՞վ են նրանք օգտագործել մամուլի ասուլիսները որպես ընտրազանգվածի հետ շփվելու, գաղափարներն ու մտտեցումները քաղաքացիներին հասցնելու գործիք: Այս առումով ուսումնասիրության երեք փուլերի ընթացքում դիտարկված նախընտրական մամուլի ասուլիսներին կուսակցությունների ու դաշինքների ներկայացուցիչների մասնակցության քանակական ցուցանիշներն ունեն հետևյալ տեսքը (**այստեղ և հետագա աղյուսակներում քաղաքական ուժերի հերթականությունը ներկայացվում է ըստ ԿԸՀ հրապարակած ցուցակի**).

Աղյուսակ 1

N	Մամուլի ասուլիսներին մասնակցած քաղաքական ուժերը	Մամուլի ասուլիսներին մասնակցության քանակը			Մասնակիցների քանակը		
		1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ
1	«ԵԼՔ» կուսակցությունների դաշինք	13	28	1	21	31	2
2	«Ազատ դեմոկրատներ» կուսակցություն	12	24	2	13	26	2
3	«Հայկական վերածնունդ» կուսակցություն	12	20	0	15	20	0
4	«Ծառուկյան» կուսակցությունների դաշինք	5	18	0	5	18	0
5	«Կոնգրես-ՀԺԿ» կուսակցությունների դաշինք	7	13	0	12	15	0
6	Հայաստանի Հանրապետական կուսակցություն	17	23	4	17	23	5
7	Հայաստանի կոմունիստական կուսակցություն	2	22	1	4	32	1
8	«Օհանյան-Բաֆֆի-Օսկանյան» կուսակցությունների դաշինք	15	13	2	23	19	5
9	Հայ Յեղափոխական Դաշնակցություն	3	17	0	4	17	0

Աղյուսակի տվյալների համեմատությունը ցույց է տալիս, որ դիտարկման առաջին փուլում մամուլի ասուլիսները՝ որպես նախընտրական քարոզչության միջոց, առավել ակտիվ է օգտագործել ՀՀԿ-ն: Նրան հաջորդում են «Օհանյան-Բաֆֆի-Օսկանյան» և «ԵԼՔ» դաշինքները: Գրեթե նույն ակտիվությամբ են հանդես եկել «Հայկական վերածնունդ»-ը և «Ազատ դեմոկրատներ»-ը: Նրանցից ասուլիսներին նկատելիորեն պակաս են մասնակցել «Կոնգրես-ՀԺԿ» և «Ծառուկյան» դաշինքները: Իսկ ՀՅԴ-ն ու Կոմկուսն ամենապասիվն են եղել:

Դիտարկման երկրորդ փուլում, այսինքն՝ պաշտոնական քարոզարշավի 27 օրվա ընթացքում, պատկերը էապես փոխվել է: «Ելք» դաշինքն ու «Ազատ դեմոկրատներ» կուսակցությունն ասուլիսներին իրենց մասնակցության քանակով շրջանցել են իշխող ՀՀԿ-ին, իսկ նախորդ փուլի առաջատարներից մեկը՝ «Օհանյան-Բաֆֆի-Օսկանյան» դաշինքը, նվազեցնելով իր ակտիվությունը, հայտնվել է հետնապահների դիրքում:

Բացի ՕԲՕ-ից, ընտրարշավի մյուս բոլոր մասնակիցները երկրորդ փուլում շեշտակի ավելացրել են իրենց մասնակցությունը մամուլի ասուլիսներին: Այսպես, «Ելք»-ի և «Ազատ դեմոկրատներ»-ի ցուցանիշներն աճել են երկու և ավելի անգամ: Գրեթե նույնքան ավելացել է «Հայկական վերածնունդ» կուսակցության և «Կոնգրես-ՀԺԿ» դաշինքի մասնակցությունը: Իսկ առաջին փուլի ամենապասիվ երեք ուժերի՝ «Ծառուկյան» դաշինքի, ՀՅԴ-ի և Կոմունիստական կուսակցության ցուցանիշներն աճեցին համապատասխանաբար՝ ավելի քան 3, 5 և 10 անգամ:

Հետընտրական շրջանում մամուլի ասուլիսների «ալիքը» կտրուկ նվազել է: Եթե քարոզարշավի վերջնամասի առանձին օրերին դրանց թիվը հասնում էր 15-ի, ապա քվեարկությանը հաջորդած ժամանակահատվածում՝ դիտարկման երրորդ փուլում, ինչպես նշվեց, արձանագրվել է ԱԺ ընտրություններին վերաբերող ընդամենը 9 ասուլիս: Ընդ որում՝ Հայ Յեղափոխական Դաշնակցությունը,

«Ծառուկյան» եւ «Կոնգրես-ՀԺԿ» դաշինքներն ու «Հայկական վերածնունդ» կուսակցությունն առհասարակ ասուլիսների չեն մասնակցել: Իսկ մասնակցածներից ամենաակտիվը ՀՀԿ-ն էր, որին հաջորդել են ՕԲՕ-ն եւ «Ազատ դեմոկրատները»:

2. Տնտեսական ու սոցիալական թեմաների արծարծման քանակական տվյալները

Ինչպե՞ս են խորհրդարանական ընտրություններին մասնակցող կուսակցություններն ու դաշինքները գնահատում երկրի արդյունաբերության, գյուղատնտեսության, առևտրի և տնտեսության այլ ոլորտների վիճակը: Դրանց զարգացման ռազմավարության առումով ի՞նչ տեսլական ունեն: Արտաքին տնտեսական կապերից որո՞նք են գերակա և որո՞նք լրացուցիչ խթանման կարիք ունեն: Ի՞նչ վիճակում է սոցիալական ոլորտը և ի՞նչ է առաջարկվում դրա բարելավման համար: Ինչպե՞ս է նվազեցվելու գործազրկությունը և ինչպե՞ս են պաշտպանվելու աշխատանքային իրավունքները: Ի՞նչ է առաջարկվում առողջապահության զարգացման և կենսաթոշակների, սոցիալական վճարների համակարգի բարելավման համար: Ահա այս թեմաներն են գլխավորապես դարձել ուսումնասիրության առարկա նախընտրական ասուլիսները դիտարկելիս:

Ընդհանրացնելով ստացված տվյալները, մոնիտորինգային խումբն արձանագրել է, որ պաշտոնական նախընտրական քարոզչության ժամանակահատվածին նախորդող 27 օրերի ընթացքում (դիտարկման առաջին փուլ) կայացած մամուլի ասուլիսներում ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի ներկայացուցիչները քիչ են անդրադարձել վերոհիշյալ տնտեսական ու սոցիալական խնդիրներին: Ընդ որում՝ մինչև 2017թ. փետրվարի 16-ը՝ կուսակցությունների ու դաշինքների ընտրական ցուցակների կազմման ու ԿԸՀ ներկայացման վերջնաժամկետը, դրանք գրեթե չէին էլ հիշատակվում, քանի որ այդ ժամանակահատվածի գլխավոր ինտրիգը հենց ընտրացուցակներն ու դրանցում արտացոլվող քաղաքական վերադասավորումներն էին: Այդ գործընթացներից հետո միայն տնտեսական ու սոցիալական խնդիրները սկսեցին արծարծվել բանախոսների ելույթներում:

Պաշտոնական քարոզարշավի 27 օրերին (դիտարկման երկրորդ փուլ) ընտրություններին մասնակցող գրեթե բոլոր քաղաքական ուժերը, բացառությամբ ՕԲՕ դաշինքի, շատ ավելի հաճախ և հանգամանալից էին անդրադառնում սոցիալ-տնտեսական հարցերին: Դրանք կուսակցությունների ու դաշինքների մեծամասնության համար արդեն դարձել էին գլխավոր թեմաներից մեկը, իսկ Կոմկուսի, «Հայկական վերածնունդ»-ի և «Ծառուկյան» դաշինքի համար, ըստ էության՝ գլխավորը. այլ խնդիրներին այս ուժերը քիչ ուշադրություն էին դարձնում:

Ընտրություններից հետո կայացած ասուլիսներին (դիտարկման երրորդ փուլ) դրանցում մասնակցած կուսակցություններից ու դաշինքներից միայն ՀԿԿ-ի եւ «Ազատ դեմոկրատների» ներկայացուցիչներն են հանգամանալից անդրադարձ կատարել տնտեսական եւ սոցիալական թեմաներին, իսկ ՀՀԿ-ի, ՕԲՕ-ի եւ «Ելքի»

բանախոսները կամ բավարարվել են այդ ոլորտներին վերաբերող խնդիրների հիշատակմամբ, կամ ընդհանրապես շրջանցել են դրանք: Այն սակավաթիվ ասուլիսներին, որոնք կայացան հետընտրական ժամանակաշրջանում, հիմնականում հնչում էին գնահատականներ ապրիլի 2-ի քվեարկության ընթացքի և արդյունքների վերաբերյալ:

Թե ընդհանուր առմամբ ինչ մաս են կազմել սոցիալական և տնտեսական թեմաները կոնկրետ քաղաքական ուժերի ներկայացուցիչների մամուլի ասուլիսների ամբողջ տևողության մեջ՝ երևում է հետևյալ աղյուսակում (այն նույնպես պարունակում է դիտարկման 3 փուլերի տվյալները՝ համադրելու նկատառումով)։

Աղյուսակ 2

N	Կուսակցություններ և դաշինքներ	Մամուլի ասուլիսների ընդհանուր տևողությունը			Տնտեսական և սոց. հարցերին նվիրված ժամանակը			Տոկոսային հարաբերակցություն		
		1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ
1	«ԵԼՔ» կուսակցությունների դաշինք	298 ր 45վ	378ր 2վ	9ր 20վ	29ր 17վ	34 ր 7 վ	0	9,87 %	9,02 %	0%
2	«Ազատ դեմոկրատներ» կուսակցություն	151ր 50վ	433ր 31վ	45ր 13վ	15ր 34վ	82ր 5վ	11ր 4վ	10,25%	18,93%	24,47%
3	«Հայկական վերածնունդ» կուսակցություն	181ր 16վ	271 ր 29վ	0	23ր 48վ	75ր 11վ	0	13,13 %	27,69%	0
4	«Ծառուկյան» կուսակցությունների դաշինք	87 րոպե	316ր 40վ	0	14ր 57վ	68ր 42վ	0	17,18%	21,69%	0
5	«Կոնգրես-ՀԺԿ» կուսակցությունների դաշինք	223 ր 53վ	380 ր 4վ	0	4ր 14վ	53ր 28վ	0	1,89 %	14,07%	0
6	Հայաստանի Հանրապետական կուսակցություն	309ր 5վ	531ր 41վ	72ր 42վ	7ր 45վ	33ր 21վ	27վ	2,51%	6,27%	0,62%
7	Հայաստանի կոմունիստական կուսակցություն	42ր 19վ	421ր 37վ	17ր 28վ	7ր 8վ	124ր 16վ	17ր 28վ	16,86%	29,47%	100%
8	«Օհանյան-Բաֆֆի-Օսկանյան» կուսակցությունների դաշինք	399 ր 40վ	236ր 55վ	53ր 2վ	12ր 39վ	9ր 24վ	5վ	3,17 %	3,97%	0,16%
9	Հայ Յեղափոխական Դաշնակցություն	66ր 53վ	241ր 31վ	0	5վրկ	14ր 14վ	0	0,12%	5,89%	0

Ինչպես երևում է աղյուսակից, դիտարկման առաջին փուլում մամուլի ասուլիսների տևողության առումով նույնպես Հանրապետական կուսակցությունը առաջատարների շարքում է (309 րոպե 5 վրկ), բայց ոչ առաջինը. նրան այս ցուցանիշով շրջանցել է «Օհանյան-Բաֆֆի-Օսկանյան» դաշինքը (399 րոպե 40 վրկ): Սակայն նշված տևողություններից տնտեսական և սոցիալական հարցերին նվիրված ժամանակի առումով թե՛ ՀՀԿ-ն և թե՛ ՕԲՕ-ն լավագույն դիրքերում չեն: Այդ թեմաներին ակնհայտորեն ավելի շատ ուշադրություն են դարձրել «Ելք» դաշինքը (29 րոպե 17 վրկ) և «Հայկական վերածնունդ» կուսակցությունը (23 րոպե 48 վրկ): Նրանց, նկատելիորեն զիջելով, հաջորդում են «Ազատ դեմոկրատներ» կուսակցությունը (15 րոպե 34 վրկ) և «Ծառուկյան» դաշինքը (14 րոպե 57 վրկ)*:

Դիտարկման երկրորդ փուլում՝ պաշտոնական քարոզարշավի ընթացքում, ասուլիսների ընդհանուր տևողության ցուցանիշի առումով իրավիճակը միանգամայն փոխվեց. «Օհանյան-Բաֆֆի-Օսկանյան» դաշինքն ակնհայտորեն պասիվացավ և դարձավ հետնապահ, իսկ ՀՀԿ-ն զբաղեցրեց առաջատարի դիրքը: Հանրապետականներին, թեև մոտ 100 րոպե զիջելով, հաջորդեցին «Ազատ դեմոկրատներ»-ը, իսկ վերջիններիս՝ Կոմունիստական կուսակցությունը, որի առաջին փուլի այս ցուցանիշն ամենացածրն էր: Ակտիվ էին նաև «Կոնգրես-ՀԺԿ» (380 րոպե 4 վրկ), «Ելք» (378 րոպե 2 վրկ), «Ծառուկյան» (316 րոպե 40 վրկ) դաշինքները:

Ընդհանուր առմամբ քարոզարշավի 27 օրերին գրեթե բոլոր քաղաքական ուժերը զգալիորեն ավելացրեցին իրենց ջանքերը՝ մամուլի ասուլիսների միջոցով իրենց ծրագրերն ու մոտեցումները ընտրողներին ներկայացնելու համար, և դա, իհարկե, բնական է: Նույնը կարելի է ասել նաև տնտեսական ու սոցիալական հարցերին հատկացված ժամանակի առումով: Այս ցուցանիշի բացարձակ թվերի համեմատությունը ցույց է տալիս, որ կուսակցությունների ու դաշինքների ճնշող մեծամասնությունը երկրորդ փուլում բազմակի անգամ շատ է ուշադրություն դարձրել սոցիալ-տնտեսական խնդիրներին:

Ապրիլի 2-ի ընտրություններից հետո՝ դիտարկման երրորդ փուլի 27 օրերի ընթացքում, ասուլիսներին ամենաշատը մասնակցած ՀՀԿ-ի ներկայացուցիչներից միայն մեկն է անդրադարձել սոցիալ-տնտեսական թեմաներին, այն էլ՝ ընդամենը 27 վայրկյան: Իսկ ահա Կոմունիստական կուսակցությունը թեև հետընտրական ընդամենը մեկ ասուլիս է ունեցել, այդուհանդերձ, այն ամբողջությամբ եղել է տնտեսական խնդիրների վերաբերյալ (17 րոպե 28 վրկ) ու, փաստորեն, 3-րդ փուլում այս թեմայի արժարժման տևողության առումով ՀԿԿ-ն գերազանցեց մյուս ուժերին: Կոմունիստներին հաջորդում են «Ազատ դեմոկրատները», որոնք իրենց երկու ասուլիսներում սոցիալ-տնտեսական հարցերից խոսել են 11 րոպե 4 վրկ: Հետընտրական շրջանում լրագրողների հետ նույնքան հանդիպում են ունեցել նաև ՕԲՕ դաշինքի ներկայացուցիչները, բայց վերոհիշյալ թեմաներին անդրադարձել են

* Դիտարկող խումբը վկայակոչում է բացարձակ թվերը, քանի որ տոկոսները հաշվարկված են միայն նույն տողի ցուցանիշների հարաբերակցությունը ցույց տալու, այլ ոչ թե տարբեր տողերի տվյալների համեմատությամբ վարկանիշ որոշելու համար:

ընդամենը մեկ հիշատակմամբ, որը տևել է 5 վայրկյան: Իսկ ահա «Ելք» դաշինքի միակ ասուլիսին բանախոսները ընդհանրապես չեն արժարժել այդ խնդիրները:

Եթե նախորդ աղյուսակում ներկայացված էր յուրաքանչյուր քաղաքական ուժի ներկայացուցիչների ասուլիսների ընթացքում տնտեսական և սոցիալական թեմաներին հատկացված ընդհանուր՝ համակցված ժամանակը, ապա ստորև բերված թվերը վերաբերում են այդ թեմաների արժարժման տևողությանը՝ առանձին-առանձին:

Աղյուսակ 3

N	Կուսակցություններ և դաշինքներ	Տնտեսական հարցերին նվիրված ժամանակը			Սոցիալական հարցերին նվիրված ժամանակը			Տոկոսային հարաբերակցություն		
		1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ
1	«ԵԼՔ» կուսակցությունների դաշինք	28ր 19վ	14ր 27վ	0	58 վրկ	19ր 40վ	0	96,70% / 3,30%	42,35% / 57,65%	0%
2	«Ազատ դեմոկրատներ» կուսակցություն	8ր 50վ	71ր 24վ	10ր 49վ	6ր 44վ	13ր 41վ	15վ	56,75% / 43,25%	83,92% / 16,08%	97,74% / 2,26
3	«Հայկական վերածնունդ» կուսակցություն	13ր 17վ	50ր 20վ	0	10ր 31վ	20ր 51վ	0	55,81% / 44,19%	70,71% / 29,29%	0
4	«Ծառուկյան» կուսակցությունների դաշինք	10ր 22վ	54ր 25վ	0	4ր 35վ	14ր 17վ	0	69,34% / 30,66%	79,21% / 20,79%	0
5	«Կոնգրես-ՀԺԿ» կուսակցությունների դաշինք	4ր 9վ	41ր 12վ	0	5 վրկ	12ր 16վ	0	98,03% / 1,97%	77,06% / 22,94%	0
6	Հայաստանի Հանրապետական կուսակցություն	7ր 45վ	26ր 48վ	0	0	6ր 19վ	27վ	100% / 0	80,93% / 19,07%	0/100%
7	Հայաստանի կոմունիստական կուսակցություն	5ր 8վ	100ր 47վ	17ր 28վ	2 րոպե	19ր 19վ	0	71,96% / 28,04%	83,92% / 16,08%	100%/0
8	«Օհանյան-Բաֆֆի-Օսկանյան» կուսակցությունների դաշինք	11 ր	6ր 25վ	5վ	1ր 39վ	4ր 59վ	0	86,96% / 13,04%	56,29% / 43,71%	100%/0
9	Հայ Յեղափոխական Դաշնակցություն	5 վրկ	10ր 24վ	0	0	3ր 50վ	0	100% / 0%	73,07% / 26,93%	0

Աղյուսակում բերված տվյալները վկայում են, որ ընտրություններին մասնակցող գրեթե բոլոր քաղաքական ուժերը իրենց մամուլի ասուլիսներում ավելի շատ խոսել են տնտեսական, քան սոցիալական խնդիրների մասին: Միակ բացառությունը «Ելք» դաշինքն է, որի ներկայացուցիչները դիտարկման երկրորդ փուլի՝ պաշտոնական քարոզարշավի ժամանակ, նախապատվությունը տվեցին

սոցիալական թեմաներին: Մինչդեռ, առաջին փուլում նրանք գերադասում էին խոսել տնտեսական խնդիրներից, ավելին՝ ելույթների այս բաղադրիչին նվիրված ժամանակի առումով «Ելք»-ն առաջատարն էր: Իսկ ահա երկրորդ փուլում այդ ցուցանիշով դաշինքին շրջանցել են 6 քաղաքական ուժեր: Ակնհայտ առաջատարն այստեղ Կոմունիստական կուսակցությունն է, որին հաջորդում են «Ազատ դեմոկրատները», «Ծառուկյան» դաշինքը և «Հայկական վերածնունդ»-ը: Ինչպես արդեն նշել ենք, դիտարկման երրորդ՝ հետընտրական փուլում նույնպես Կոմկուսը ամենաշատ ժամանակն է հատկացրել տնտեսական խնդիրների վերլուծությանը: Ու կրկին նրանց հաջորդել են «Ազատ դեմոկրատները», թեև ընդհանուր առմամբ այս փուլի ցուցանիշները բազմակի անգամ զիջում են նախորդին:

Ինչ վերաբերում է սոցիալական հարցերին հատկացված ժամանակին, ապա այս ցուցանիշով, ըստ բացարձակ թվերի, թե՛ առաջին, թե՛ երկրորդ փուլում առաջատարը «Հայկական վերածնունդ» կուսակցությունն է: Բուն պաշտոնական քարոզարշավի օրերի տվյալներով՝ նրան ընդհուպ մոտեցան «Ելք» դաշինքն ու Կոմկուսը: Դրանց հաջորդում են «Ծառուկյան» դաշինքը, «Ազատ դեմոկրատներ»-ը և «Կոնգրես-ՃԺԿ»-ն: Ուշադրություն է գրավում այն փաստը, որ դիտարկման առաջին փուլում իշխանական կուսակցությունների՝ ՀՀԿ-ի և ՀՅԴ-ի ներկայացուցիչները առհասարակ չեն խոսել սոցիալական հարցերից՝ սահմանափակվելով միայն այդ ոլորտի խնդիրների լուծման անհրաժեշտության հիշատակմամբ:

Դաշնակցականներն ասուլիսների այս բաղադրիչի ցուցանիշով երկրորդ փուլում նույնպես հետնապահ էին, իսկ հանրապետականներին նույն ժամանակահատվածում շրջանցել են 6 քաղաքական ուժեր:

Դիտարկման երրորդ փուլում ընտրություններին մասնակցած 9 քաղաքական ուժերից, ինչպես արդեն նշել ենք, 5-ն են ասուլիսներ տվել, սակայն այս հետընտրական ժամանակահատվածում արդեն որևէ մեկը հանգամանալից չի խոսել սոցիալական խնդիրներից: Այսպես, ՀՀԿ-ն և «Ազատ դեմոկրատները» միայն հպանցիկ անդրադարձ են կատարել դրանց՝ համապատասխանաբար 27 վրկ և 15 վրկ տևողությամբ հիշատակումներով: Իսկ մնացածները՝ ՕԲՕ-ն, ՀԿԿ-ն և «Ելք»-ը ընդհանրապես չեն արժարժել այդ ոլորտի թեմաները:

3. Տնտեսական ու սոցիալական ոլորտների խնդիրներ և առաջարկություններ՝ ըստ քաղաքական ուժերի

Մամուլի ասուլիսների ժամանակ խորհրդարանական ընտրություններին մասնակցող՝ իրենց ընդդիմադիր հայտարարած բոլոր քաղաքական ուժերի ներկայացուցիչները նշել են, որ երկրի տնտեսությունը ճգնաժամային վիճակում է: Ինչ վերաբերում է իշխանական կուսակցություններին, ապա նրանք կամ շրջանցել են թեման, կամ խուսափել են բացասական գնահատականներ տալուց: Նույն մոտեցումն է ցուցաբերվել քաղաքական ուժերի կողմից նաև սոցիալական թեմաները արժարժելիս: Ստորև ներկայացնում ենք, թե դիտարկված ասուլիսների ընթացքում յուրաքանչյուր կուսակցություն և դաշինք ինչ տնտեսական և սոցիալական խնդիրներ է բարձրացրել ու ինչ լուծումներ է առաջարկել: Հաճախ այդ առաջարկություններից շատերը հռչակագրային բնույթ են կրում և չեն մատնանշում նպատակին հասնելու ուղիներն ու մեխանիզմները: Այնուամենայնիվ, արձանագրվածը որոշակի

պատկերացում է տալիս խորհրդարանական ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերից յուրաքանչյուրի սկզբունքների մասին:

«ԵԼՔ» կուսակցությունների դաշինք

Տնտեսական ոլորտ: Փետրվարի 16-ին «Հողված 3» ակումբում դաշինքի ընտրական ցուցակը գլխավորող Էդմոն Մարությանը հայտարարել է, որ տնտեսական իրավիճակը շատ բարդ է, իսկ ցուցակի երրորդ հորիզոնականը զբաղեցնող Նիկոլ Փաշինյանը հայտարարել է, որ տնտեսություն Հայաստանում չունենք: Նույն ցուցակում երկրորդը՝ Արամ Սարգսյանը, կարծում է, որ խոչընդոտներ շատ կան, բայց հիմնականը կոռուպցիան է: Դաշինքի ղեկավարները, ինչպես նաև մյուս ներկայացուցիչները, իրենց ասուլիսներում ընդգծել են հետևյալ խնդիրները.

- Սեփականությունը օրենսդրորեն պաշտպանված չէ,
- Քաղաքացիները հավատ չունեն տնտեսական գործունեությամբ զբաղվելու հնարավորությունների նկատմամբ,
- ԵԱՏՄ-ն խոչընդոտ է Հայաստանի տնտեսական զարգացման համար, այդ միությանն անդամակցելը սխալ քաղաքական որոշում էր,
- Արտադրական տարածքները վերածվել են առևտրային տարածքների,
- Հարկային մարմինները վերածվել են փոքր և միջին ձեռնարկությունների ճնշման գործիքի և կախվածության մեջ են պահում բիզնեսը իշխանությունից,
- Չկան մրցակցության հավասար պայմաններ, որոնց բացակայությունը խոչընդոտում է ներդրումների ներգրավմանը,
- Հայաստանում մենաշնորհները գերիշխում են,
- Մարզերում տնտեսական վիճակը էլ ավելի վատ է, քան մայրաքաղաքում,
- Ոչ միայն խոշոր կապիտալն է դուրս գնում երկրից, այլ նաև միջին բիզնեսը,
- Թերզարգացած տնտեսության պատճառով կախված ենք արտաքին գործոններից,
- Երկիրը բլոկադայի մեջ է:

Այս խնդիրների համատեքստում դաշինքի անդամները ներկայացրել են որոշ առաջարկություններ՝ դրանք դիտարկելով որպես իրենց անելիքներ ապագա խորհրդարանում.

- Տնտեսությունում ստատուս քվոյի փոփոխմանն ուղղված նախաձեռնություններ են իրականացվելու, առաջ են քաշվելու այնպիսի չափանիշներ, որոնք կապահովեն տնտեսական զարգացում,
- Դաշինքի անդամները հետամուտ են լինելու հարկային օրենսդրության փոփոխմանը, որպեսզի հարկերի միջոցով չճնշվի փոքր և միջին բիզնեսը, հավասար մրցակցային պայմաններ ստեղծվեն ոլորտում: Հարկային օրենսգիրքը, հարկերը դառնալու են բացառապես տնտեսության զարգացումը կարգավորող միջոց: Հայաստանը պետք է զերծ լինի մենաշնորհներից,
- Որպես այլընտրանք ԵԱՏՄ-ին՝ պետք է այդ միությանն անդամակցող երկրների հետ երկկողմ հարաբերությունները պահպանել, բայց բուն կազմակերպությունից, որը ՀՀ-ի համար բալաստ է, ազատվել,

- Անդամակցելով ԵԱՏՄ-ին և հրաժարվելով ԵՄ-ի հետ ստացացման պայմանագրից՝ ՀՀ-ն տուրք տվեց տնտեսությանը ներկայացվող շատ ավելի ցածր ստանդարտներին և հետ կանգնեց զարգացման ձգտումից: Դեմ արտահայտվելով ԵԱՏՄ-ին անդամակցությանը՝ դաշինքը իր մտտեցումներում հաշվի է առնելու ընթացիկ միջազգային և տարածաշրջանային իրավիճակի վերլուծությունը և ՀՀ-ի ազգային շահերը,
- Վերսկսվելու են բանակցությունները ԵՄ-ի հետ՝ Աստացացման խորը և համապարփակ առևտրի պայմանագրի շուրջ,
- Արդյունաբերությունը անհրաժեշտ է դարձնել առաջնային ոլորտ, ինչի շնորհիվ բյուջետային եկամուտներ կապահովվեն և շատ աշխատատեղեր կստեղծվեն: Պետք է վերագործարկել «Նաիրիտը», կոշկագործությունն ու տրիկոտաժագործությունը, դրա համար ապահովել ներդրումային հնարավորություններ: Անհրաժեշտ է նախանշել առաջընթացի ուղղություն և այն ազատել բոլոր տեսակի հարկերից,
- Ուսումնասիրել ծախսված վարկերի արդյունավետությունը և դրանց հետ առնչվող վերջին 5 տարիներին բարձրաստիճան պաշտոն զբաղեցրած անձանց գույքային վիճակը,
- Դաշինքը ստեղծելու է նոր տնտեսություն, Հայաստանը պետք է դառնա արդյունաբերական երկիր,
- Նախատեսվում է զարգացնել գիտատար, այդ թվում՝ ռազմական արդյունաբերությունը,
- Հանքարդյունաբերության հումքի մշակման ամբողջ ցիկլը կազմակերպել երկրի ներսում, իսկ հարկերը վերանայել՝ պետբյուջեի մուտքերը ավելացնելու նկատառումով,
- Մարզերը բաժանել ըստ գոտիների և դիֆերենցացնել գանձվող հարկերը,
- Փոքր և միջին բիզնեսի ոլորտում անհրաժեշտ է կիրառել ֆիքսված հարկեր,
- Առևտրային տարածքները նորից վերածվելու են արտադրական տարածքների,
- Դաշինքը վերականգնելու է քաղաքացիների հավատը տնտեսական գործունեությամբ զբաղվելու հնարավորությունների նկատմամբ, միջին խավը պետք է լայնորեն ներգրավվի և մասնակից դառնա տնտեսական գործընթացներին,
- Գյուղատնտեսությունում առաջատար տեխնոլոգիաների ներդրում, ապահովագրական համակարգի ստեղծում, մթերքի իրացման համար բարենպաստ պայմանների ապահովում,
- Սփյուռքի ներդրումների վերահսկողությունը պետք է վստահվի նաև սփյուռքին,
- Բլոկադային իրավիճակը հաղթահարելու կարևոր քայլ կլինի Իրանի հետ համագործակցության զարգացումը, երկաթգծի կառուցումն ու շահագործումը, ինչպես նաև իրանական գազի ներկրումը և Հայաստանի տարածքով արտահանումը:

Սոցիալական ոլորտ: Դիտարկման առաջին փուլում «Ելք»-ի ներկայացուցիչներն իրենց ասուլիսների ընթացքում գրեթե չեն անդրադարձել սոցիալական խնդիրներին: Բացառություն է կազմում դաշինքի անդամ Մանե Թանդիլյանը, ով փետրվարի 20-ին «Հայք» մամուլի ակումբում մատնանշել է մարդու

աշխատանքի ծավալի և վարձատրության անհամապատասխանության խնդիրը («Մարդն օրնիբուն աշխատում է, սակայն արժանապատիվ կենսամակարդակ չի կարողանում ապահովել»): Իսկ անդրադառնալով կենսաթոշակային համակարգին՝ ընդգծել է, որ կարևորում է այդ համակարգի արմատական բարեփոխումը: «Զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիքներին սոցիալական աջակցություն տալու մասին» ՀՀ օրենքով նախատեսված 1000 դրամ պարտադիր վճարումների վերաբերյալ էլ նշել է, որ իշխանության նկատմամբ առկա անվստահության մթնոլորտում անթույլատրելի է նման մեխանիզմներ կիրառելը:

Ի տարբերություն դիտարկման առաջին փուլի, երկրորդում՝ դաշինքը սոցիալական թեմաներն արծարծելու առումով հայտնվել է առաջատարների շարքում: Մասնավորապես՝ մատնանշվել են հետևյալ անելիքները.

- Կուտակային կենսաթոշակի համակարգը վերանայելու անհրաժեշտություն ունի,
- Կանանց աշխատանքային իրավունքները պաշտպանելու մեխանիզմներ են մշակվելու,
- Հաշմանդամություն ունեցող անձանց, այդ թվում բանակում հաշմանդամություն ստացած զինծառայողների՝ հասարակական-քաղաքական կյանքում լիարժեք ինտեգրվելու համար համակարգային փոփոխություններ պետք է իրականացվի,
- Առողջապահության ոլորտի բարեփոխումները պետք է ուղղված լինեն պետպատվերի իրագործման վերանայմանը, դրա սերտիֆիկացմանը, նախատեսված գումարների՝ մարդկանց տրամադրմանը, պետական ապահովագրության ստեղծմանը, 5 տարվա ընթացքում կրկնապատկել պետբյուջեից այս ոլորտին տրվող հատկացումները,
- Երրորդ և չորրորդ երեխայի ծնվելու դեպքում նախատեսվում է միանվագ վճարը կրկնապատկել, իսկ հինգերորդ և վեցերորդի դեպքում՝ եռապատկել,
- Պետական մարմինների կառուցվածքի օպտիմալացմամբ ապահովել դրանց աշխատակիցների/ծառայողների աշխատավարձերը:

Դիտարկման երրորդ փուլում, «Ելք» դաշինքի ներկայացուցիչներն ընդամենը մեկ ասուլիս են տվել, որի ընթացքում չեն անդրադարձել տնտեսական և սոցիալական հարցերին:

«Ազատ դեմոկրատներ» կուսակցություն

Տնտեսական ոլորտ: Կուսակցությունը խիստ քննադատաբար է վերաբերվում գործող իշխանության տնտեսական քաղաքականությանը: Մասնավորապես, «Ազատ դեմոկրատների» ցուցակում երկրորդ տեղը զբաղեցնող Հրանտ Բագրատյանը փետրվարի 20-ին «Հայելի» ակումբում նշել է, որ այդ քաղաքականությունը էրոզիայի է ենթարկում պետության հիմքերը: Նրան հաջորդող երրորդ հորիզոնականը զբաղեցնող Ստյոպա Սաֆարյանն էլ նույն ակումբում փետրվարի 22-ին հայտարարել է, որ իրականացվող քաղաքականությունը հանգեցնում է աղետալի վիճակի, տնտեսական հետընթացի: Իր հերթին ցուցակը գլխավորող Խաչատուր Քոքոբեյանը

մարտի 3-ին «Հայելի»-ում տեղի ունեցած ասուլիսում նշել է, որ առանց ֆինանսական ներդրումների հնարավոր չէ տնտեսություն զարգացնել:

Պաշտոնական քարոզարշավի ընթացքում՝ մարտի 9-ին նույն ակումբում տեղի ունեցած ասուլիսի ժամանակ Հրանտ Բագրատյանը հայտարարել է, որ տնտեսությունը կոլապսի մեջ է:

Սրա հետ մեկտեղ դիտարկման երեք փուլերում կուսակցության անդամներն իրենց ասուլիսներում մատնանշել են նաև հետևյալ խնդիրները.

- Ներդրումային ֆոնդերի կարգավորման գործառույթը վերապահվել է Կենտրոնական բանկին, ինչը սխալ մոտեցում է,
- Փոքր բիզնեսն ավելի շատ է հարկվում, քան խոշորը, արդյունքում նոր խոշոր ձեռնարկություններ են մտնում շուկա, իսկ հազարավոր փոքրերը փակվում են,
- Գյուղատնտեսության ոլորտում չեն տարանջատվում գյուղացիական և ֆերմերային տնտեսությունները,
- Կառավարությունը չի ստեղծում փոքր ներդրողների համար արժեթղթերի շուկա,
- «Նաիրիտ» արտադրական միավորումը թալանվել է և նրա վերագործարկելը լուրջ խնդիր է,
- Լիարժեք չեն օգտագործվում հանքարդյունաբերության և տուրիզմի հնարավորությունները,
- ԵԱՏՄ-ն Հայաստանի համար ոչ թե հնարավորություն է, այլ լուրջ մարտահրավեր. մեր ինքնիշխանությունը պատվիրակել ենք ԵԱՏՄ-ին, ինչի պատճառով չենք կարող ունենալ լավ տնտեսություն, լավ հեռանկարներ. ապրանքաշրջանառությունը կրճատվել է, Եվրոպայի հետ առևտուրը նվազել է, Իրանի հետ կապերը թուլացել են, գազը գնվում է ավելի թանկ, քան ԵԱՏՄ այլ երկրներում,
- Հայաստանի տնտեսությունը կախվածության մեջ է Ռուսաստանից, վերջինիս ազդեցությունը և հսկողությունը հայաստանյան տնտեսության վրա այնքան մեծ է, որ արգելափակում է այլընտրանքային գործընկերներ և հնարավորություններ ունենալը,
- Ռուսաստանը եղել է աշխատունակ հայաստանցի միգրանտների համար գործատու, բայց այդ գործատուն այսօր սնանկացման եզրին է, ինչը բացասաբար է ազդելու Հայաստան եկող տրանսֆերտների ծավալների վրա,
- Հայաստանն ունի շուկաների և տնտեսության դիվերսիֆիկացման կարիք՝ արևմտյան տնտեսական տարածքի միջոցով,

Խորհրդարան անցնելու դեպքում կուսակցությունը նախատեսում է իրականացնել տնտեսական ոլորտի բարեփոխումներին ուղղված հետևյալ քայլերը.

- Տնտեսության զարգացում ազատականացման ճանապարհով, տնտեսության կառավարման ապակենտրոնացում
- Որպես ազատական քաղաքականության ջատագով՝ կուսակցությունը խրախուսելու է մրցակցությունն ու բիզնեսի ազատությունը, փոքր բիզնեսի զարգացումը՝ կտրուկ չափավորելով խոշոր բիզնեսի աճը,

- Կենտրոնական բանկի լիազորությունների շրջանակը պետք է վերանայել, մասնավորապես՝ այն պետք է զբաղվի գլխավորապես միայն դրամավարկային քաղաքականությամբ,
- Կուսակցությունը նախատեսում է ստերիլիզացնել դրսից ուղարկվող տրանսֆերտները՝ լրացուցիչ բյուջետային մուտքեր ապահովելու համար,
- Փոքր ու միջին բիզնեսի մասնաբաժինը տնտեսությունում հասցվելու է 60 տոկոսի,
- Փոքր և միջին բիզնեսի հարկային բեռի նվազեցումից պետական բյուջեի մուտքերի պակասը կփոխհատուցվի ստվերային ձեռնարկատիրությունը հարկային դաշտ բերելով,
- Նույն միջոցներով նախատեսվում է հիմնել ինովացիոն լաբորատորիաներ, զարգացնել SS ոլորտը,
- Եկամտահարկը պետք է ճկուն լինի, լողացող սանդղակ ունենա,
- Արտաքին պարտքի կեսը աստիճանաբար պետք է տրանսֆորմացնել ներքին պարտքի,
- Կուսակցության տնտեսական ծրագրային մոտեցումները 6,5-7% աճ են ապահովելու, ՀՆԱ-ն 10 անգամ կզերազանցի ներդրումների գումարների՝ զսպելով գնաճը,
- Անհրաժեշտ է ստեղծել սուվերեն հիմնադրամ՝ փոքր ներդրումներ իրականացնելու համար,
- Ստվերային տնտեսության դեմ պայքարելու շնորհիվ բյուջեն կհամալրվի 800 միլիոնից մեկ միլիարդ դոլարով,
- Առաջարկվում է վերանայել գազային պայմանագրերը,
- Արարատյան դաշտավայրում անհրաժեշտ է ստեղծել խաղողագործական կոոպերատիվներ՝ զինու արտադրությունը խթանելու համար,
- Կուսակցությունը նախատեսում է դադարեցնել անդամակցությունը ԵԱՏՄ-ին և դրա վերաբերյալ օրենքի նախագիծ է պատրաստել: «Ազատ դեմոկրատներ»-ի դիրքորոշումն է՝ Հայաստանը պետք է դառնա եվրոպական մեծ ընտանիքի անդամ. դա է երկրի համար ճիշտ ուղին, այդ թվում նաև տնտեսական զարգացման առումով:

Սոցիալական ոլորտ: Դիտարկման առաջին փուլում «Ազատ դեմոկրատները» ասուլիսների ընթացքում անդրադարձել են նախկին ԽՍՀՄ Խնայբանկում ավանդների փոխհատուցման, աղքատության խնդրի սրացման և սոցիալական բևեռացվածության, վճարովի զինծառայողների աշխատավարձերի, զինհաշմանդամություն ունեցող անձանց օժանդակություն տրամադրելու, մանկատան շրջանավարտներին բնակարանային պայմաններով ապահովելու հարցերին: Նշվել է նաև, որ մեծ են գործազրկության ծավալները, ինչը հանգեցնում է բնակչության արտագաղթի ահագնացմանը: Բացի սա, պատգամավորության որոշ թեկնածուներ (Անահիտ Բախշյան, Արմեն Առաքելյան) ընդհանրական ձևով հիշատակել են առողջապահության և սոցիալական ոլորտներում խնդիրների լուծման անհրաժեշտությունը:

Ինչ վերաբերում է լուծումներին, ապա բանախոսները հիմնականում հղում են կատարել կուսակցության նախընտրական ծրագրին, որտեղ ըստ նրանց՝ զետեղված են վերոհիշյալ խնդիրների լուծումները: Դրանցից որոշներն են միայն ներկայացվել

լրագրողներին: Մասնավորապես, ավանդների վերադարձման առումով Հրանտ Բագրատյանը փետրվարի 20-ին «Հայելի» ակումբում տեղի ունեցած ասուլիսին նշել է, որ «Ազատ դեմոկրատները» դեմ են մեկը երեսունին հարաբերակցությամբ «կոպեկներ» վերադարձնելուն, այդ գումարները պետք է ձևակերպվեն որպես պետական պարտք և սպասարկվեն որպես այդպիսին: Անահիտ Բախշյանն էլ զինհաշմանդամություն ունեցող անձանց՝ արտասահմանում բուժման համար ծախսվող մեծ գումարներն առաջարկում է ներդնել Հայաստանում՝ այդ բուժսպասարկումն ապահովելու համար:

Դիտարկման երկրորդ փուլում նույնպես արծարծվել են վերոհիշյալ խնդիրներն ու լուծումները, սակայն դրա հետ մեկտեղ վեր են հանվել սոցիալական ոլորտի այլ թեմաներ: Մասնավորապես՝ Անահիտ Բախշյանը մարտի 7-ին «Հայելի» ակումբում նշել է, որ կուսակցությունը հետամուտ է լինելու մանկավարժների աշխատավարձի բարձրացմանը: Գնահատելով ընդհանուր սոցիալական վիճակը՝ պատգամավորության թեկնածուն ասել է, որ ժողովուրդը ճնշված է և հացի խնդիր ունի: Նրա այս միտքը շարունակում է կուսակցության ցուցակում երկրորդ համարը՝ Հրանտ Բագրատյանը՝ ասելով, որ հասարակությունը տոտալ ճգնաժամի մեջ է և որ ՀՆԱ-ի բարձրացման հետևանքը պետք է լինի կենսաթոշակների և նվազագույն աշխատավարձերի բարձրացումը: Պատգամավորության թեկնածու Սամվել Հարությունյանն էլ մարտի 15-ին «Մեդիա կենտրոն»-ում նշել է, որ առողջապահությունը մատչելի չէ բնակչության մեծամասնությանը: Այդ խնդիրը լուծելու համար ըստ նրա՝ հարկավոր է ավելացնել ֆինանսավորումը, հատկապես թիրախավորելով սոցիալապես անապահով խավին:

«Հայկական վերածնունդ» կուսակցություն

Տնտեսական ոլորտ: Դեռ նախքան պաշտոնական քարոզարշավը՝ փետրվարին 16-ին, «Հայկական վերածնունդ»-ի գրասենյակում տեղի ունեցած ասուլիսի ընթացքում կուսակցության ղեկավար Արթուր Բաղդասարյանը հայտարարել է, որ Հայաստանում առկա է տնտեսական մենիշխանություն: ՀՎԿ ընտրական ցուցակում երկրորդ տեղը զբաղեցնող Միեր Շահգեղյանն էլ հաջորդ օրը «Sputnik Արմենիա» մամուլի կենտրոնում նշել է, որ վերջին երկու-երեք տարիների ընթացքում կտրուկ ավելացել է արտաքին պարտքը, ինչը ճնշում է գործադրում Հայաստանի տնտեսության վրա: Իսկ փետրվարի 28-ին «Հողված 3» ակումբում նա ընդգծել է, որ այսօր տարվող տնտեսական քաղաքականությունը հարկավոր է փոխել: Բացի սա, «Հայկական վերածնունդի» ներկայացուցիչները դիտարկման առաջին փուլում կայացած ասուլիսներում բարձրացրել են հետևյալ խնդիրները.

- Երկրի տնտեսական ճգնաժամի պատճառը վատ օրենքներն են,
- Կոռուպցիայի դեմ պատշաճ պայքար չի իրականացվում,
- Կառավարության ծրագրերում արդյունաբերական քաղաքականությունը գերակա ճյուղ չէ,
- Հայաստանում չի ձևավորվում արդար միջավայր բիզնեսի համար. խոշոր առևտրային տարածքները հանգեցրել են փոքր և միջին ձեռնարկությունների փակման, «կարմիր գծերը» նույնպես անարդար բիզնեսի դրսևորում է,

- Ընդերքի շահագործումը պետական հոգաձության ներքո չէ,
- Հիփոթեքային բնակարանային շինարարության համար կանխավճար գանձելը խոչընդոտում է այդ ոլորտի զարգացմանը:

Բարձրացնելով այս տնտեսական խնդիրները՝ ՀՎԿ-ականները ներկայացրել են նաև իրենց որոշ անելիքները՝ ընտրություններին հաջողության հասնելու դեպքում: Մասնավորապես, կուսակցության ղեկավար Արթուր Բաղդասարյանը լրագրողների հետ վերոհիշյալ հանդիպման ժամանակ ասել է. «Գալիս ենք, որ կոռուպցիայի դեմ պայքարենք, որ երկրի ընդերքի շահագործման համար պետական լուրջ հոգաձություն ապահովենք, որ հիփոթեքային բնակարանային շինարարության համար կանխավճար չլինի»: «Հայկական վերածնունդ»-ի մյուս անդամներն իրենց ասուլիսների ընթացքում ներկայացրել են նաև նախատեսված այլ քայլեր.

- Երկրում ընթացող դեֆինդուստրիալիզացիան կասեցվելու է նոր օրենքներով և կառավարման նոր ձևերով, որոնք ուղղված են լինելու արդյունաբերության զարգացմանը,
- Իրականացվելու է ՓՄՁ-ների զարգացմանը նպաստող տնտեսական քաղաքականություն՝ նոր օրենքների հիման վրա,
- «Կարմիր գծերը» նպատակաուղղվելու են խախտումների կանխարգելմանը, այլ ոչ թե գերշահույթներ ստանալու նպատակ հետապնդելուն,
- Օրենսդրական նախաձեռնություններով հիփոթեքային բնակարանային շինարարության համար գանձվող կանխավճարները վերացվելու են, իսկ տոկոսադրույթները նվազեցվելու են,
- Մեխանիզմներ են մշակվելու անկախության 25 տարիների ընթացքում երկրից ապօրինի կերպով դուրս հանած 25 միլիարդ դոլարը վերադարձնելու համար:

Դիտարկման երկրորդ փուլում կուսակցության ներկայացուցիչներն էլ ավելի են ընդլայնել արժարժվող տնտեսական թեմաների շրջանակը: Մասնավորապես թեկնածու Վիլեն Խաչատրյանը մարտի 9-ին «Մեդիա կենտրոնում» տեղի ունեցած ասուլիսին բարձրացրել է հարկային համակարգի միջոցով շահույթների վերաբաշխման անհրաժեշտության և մաքսակետերի արդյունավետ աշխատանքի շնորհիվ «ստվերի» կրճատման հարցերը: Իսկ մարտի 24-ին «Պոստ Սկրիպտում» ակումբում արձանագրել է, որ ընդհանուր առմամբ ձեռնարկությունների շահույթը երկրում տոկոսային նվազեցում է ապրում, նվազել են արտահանման ծավալները, պետական պարտքն աճել է: Որպես իրավիճակի բարելավման միջոց՝ առաջարկվում է կրճատել ապրանքների ներմուծումը և ավելացնել տեղական արտադրանքի ծավալները՝ հասնելով դրա արտահանմանը: Ամեն մարզում նախատեսվում է գոնե մեկ խոշոր ձեռնարկություն ունենալ, որի շուրջ կստեղծվեն բազմաթիվ փոքր ձեռնարկություններ, որոնց հարկային բեռը պետք է թեթևացնել: Միաժամանակ նախատեսվում է կիրառել շքեղության հարկի մոդել, որը լրացուցիչ մուտքեր կապահովի պետբյուջե: Կուսակցությունը նախատեսում է նաև տարբերակված մոտեցում ցուցաբերել աշխատավարձերից հարկեր գանձելու հարցում: «Հայկական վերածնունդ»-ի ներկայացուցիչները նշում են, որ Հայաստանի զարգացման ճանապարհը սոցիալիստական շուկայական տնտեսությունն է: Հանքարդյունաբերության ոլորտում կուսակցությունը նախատեսում է բացառել օֆշորային գոտիներում գրանցված կազմակերպությունների գործունեությունը:

Սոցիալական ոլորտ: «Հայկական վերածնունդի» առանցքային նախաձեռնությունն այս ոլորտում մնում է նախկին ԽՍՀՄ Խնայբանկում ավանդների փոխհատուցման գործընթացը շարունակելը (ավելի քան 40 միլիոն դոլարին համարժեք դրամ արդեն փոխհատուցվել է): Կուսակցության ներկայացուցիչները գրեթե բոլոր ասուլիսներում անդրադարձել են այս թեմային: Այս առումով հատկապես բարձրաձայնվում է այն խնդիրը, որ Քաղաքացիական օրենսգիրքն ավանդը համարում է անօտարելի սեփականություն, ինչի պատճառով ժառանգը չի կարողանում ստանալ այն: Այդ խոչընդոտը հաղթահարելու համար ՀՎԿ-ականները առաջարկելու են համապատասխան օրենսդրական փոփոխություններ, որպեսզի ներդրված ավանդները տրամադրվեն ժառանգներին: Գործընթացի շարունակականությունն ապահովելու նպատակով առաջարկվելու է յուրաքանչյուր տարի հստակ գումար նախատեսել պետական բյուջեով:

Ավանդների փոխհատուցման հարցից բացի «Հայկական վերածնունդ»-ի ներկայացուցիչները դիտարկման առաջին փուլում մատնանշել են նաև սոցիալական հետևյալ խնդիրները.

- Հողագործությամբ զբաղվող գյուղաբնակների աշխատանքը պաշտոնապես ստաժ չի համարվում, ինչը բացասաբար է անդրադառնում նրանց կենսաթոշակի վրա,
- Աղքատության ծավալները մեծանում են,
- Կառավարության ծրագրում աշխատատեղերի ստեղծումը՝ որպես քաղաքականության ուղղություն, չի շեշտվում: Գործազրկության մակարդակը շատ բարձր է,
- Երիտասարդ ընտանիքներին աջակցություն ցուցաբերելու մեխանիզմները շատ թույլ են:

Բարձրացրած այս խնդիրներից որոշների լուծման վերաբերյալ բանախոսները ներկայացրել են կուսակցության մոտեցումները: Մասնավորապես, նախատեսվում է հողագործությամբ զբաղվող գյուղաբնակների աշխատանքը պաշտոնապես ստաժ համարել օրենսդրական փոփոխության միջոցով: Ինչ վերաբերում է աշխատատեղերի ստեղծմանը, ՀՎԿ-ականները մտադիր են կառավարության ծրագրում այն վերածել քաղաքական գերակայության՝ այդպես իրականացնելով գործազրկության, մեծ հաշվով նաև՝ աղքատության մակարդակը: Երիտասարդ ընտանիքներին օժանդակելու համար կուսակցությունն առաջարկում է միանվագ ֆինանսական աջակցություն, նրանց տրամադրվելիք հիփոթեքային վարկերի տոկոսադրույքների իջեցում, բնակարանի համար կանխավճարների վերացում: «Հայկական վերածնունդը» շեշտում է, որ վերոհիշյալ խնդիրները լուծելու համար հարկավոր է ունենալ ամբողջական իշխանություն, և ընտրություններին հաջողության հասնելու դեպքում իրագործելու է Մահմանադրության մեջ ամրագրված դրույթն առ այն, որ Հայաստանը սոցիալական պետություն է:

Դիտարկման երկրորդ փուլում կուսակցության ներկայացուցիչները, բացի վերոհիշյալ հարցերից, անդրադարձել են նաև այլ թեմաների: Այսպես, մարտի 7-ին «Հայելի» ակումբում պատգամավորության թեկնածու Մարիաննա Ֆրունջյանը

մատնանշել է սոցիալապես անապահով ընտանիքների երիտասարդներին բարձրագույն կրթություն ստանալու վճարի սերտիֆիկատների տրամադրման անհրաժեշտությունը: Իսկ մարտի 9-ին «Տեսակետ» ակումբում նույն թեկնածուն հայտարարել է, որ ՀՎԿ-ն ընդլայնելու է երեխաներին վերաբերող ծրագիրը, բարձրացնելու է մայրական կապիտալի սանդղակը, անվճար մանկապարտեզների նախագիծը իրականացնելու է նաև մարզերում:

Մեկ այլ թեկնածուն էլ՝ Վիլեն Խաչատրյանը, մարտի 9-ին «Մեդիա կենտրոնում» տեղի ունեցած ասուլիսին հայտարարել է, որ «ստվերային» ձեռնարկատիրության կրճատման հաշվին կուսակցությունը նախատեսում է թոշակների ինդեքսավորում, աշխատավարձերի և նպաստների բարձրացում: Մարտի 13-ին «Պոստ Սկրիպտում» ակումբում նա ավելացրել է, որ առողջապահության ոլորտում ստեղծվելու է տվյալների էլեկտրոնային բազա և ներդրվելու է անապահով խավին սերտիֆիկատ տրամադրելու համակարգ: Իսկ մարտի 15-ին «Մեդիա կենտրոնում» Վիլեն Խաչատրյանը խոսել է շքեղության հարկի միջոցով հարստության վերաբաշխման, մարդկանց՝ ձեռնարկատիրությամբ զբաղվելու ունակությունները զարգացնելու անհրաժեշտության և հնարավորությունների մասին: Սոցիալական ծրագրերի իրականացման ֆինանսական աղբյուրներից մեկը, ըստ թեկնածու Կարեն Թումանյանի մարտի 16-ի ասուլիսին արած հայտարարության, կարող են հանդիսանալ արագաչափերով գրանցված երթևեկության կանոնների խախտման համար տուգանքների գումարները:

Դիտարկման երրորդ փուլում կուսակցության ներկայացուցիչները ոչ մի ասուլիս չեն տվել:

«Օտարկյան» կուսակցությունների դաշինք

Տնտեսական ոլորտ: Դիտարկման առաջին փուլում այս քաղաքական ուժը փորձ է կատարել տնտեսական խնդիրները ներկայացնել լայն զանգվածների հետաքրքրությունների և շահերի տեսանկյունից: Մասնավորապես, Վարդան Բոստանջյանը փետրվարի 20-ին «Հայելի» ակումբում կայացած ասուլիսին խոսել է գազի և էլեկտրաէներգիայի սակագների նվազեցման հնարավորությունների մասին: Արարատ Զուրաբյանն էլ փետրվարի 22-ին «Հենարան» ակումբում կայացած մամուլի ասուլիսի ընթացքում հայտարարել է, որ դաշինքը նախատեսում է փոքր և միջին ձեռնարկություններին 3 տարով ազատել հարկերից: Դրա փոխարեն պետական բյուջեն համալրվելու է պղնձի և մոլիբդենի հանածոների դիմաց գանձվող բնավճարների շեշտակի բարձրացմամբ (ներկայում 1 տոննա հանքանյութ ստանալու համար ընդամենը 600 դրամ է գանձվում): Դաշինքի մեկ այլ ներկայացուցիչ Միքայել Մելքումյանի տվյալներով՝ բնավճարների ավելացման շնորհիվ մեկ տարվա ընթացքում բյուջեն կհամալրվի 50-60 միլիարդ դրամով:

Խոսելով այս թեմաներից՝ դաշինքի մեկ այլ ներկայացուցիչ Տիգրան Ուրիխանյանը փետրվարի 24-ին «Հայելի» ակումբում կայացած ասուլիսին նաև անդրադարձել է ԵԱՏՄ-ին անդամակցելու հանգամանքին: Ըստ նրա՝ ճիշտ ճանապարհը ոչ թե մեկ պետության կամ միջպետական միջազգային միավորման հետ համագործակցելն է՝ ի հաշիվ մյուսների, այլ հակառակը՝ դրանց՝ միմյանց փոխլրացումը:

Հաշվի առնելով, որ Հայաստանում 1 միլիոն 400 հազար վարկառու կա, ընդ որում՝ բարձր տոկոսադրույքներով, «Ծառուկյան» դաշինքը իշխանության գալու դեպքում ծրագրում է քայլեր ձեռնարկել բանկերի քաղաքականությունը փոխելու և դրույքաչափերը վերանայելու ուղղությամբ:

Դիտարկման երկրորդ փուլում դաշինքի ներկայացուցիչների ասուլիսների բովանդակությունը հիմնականում կառուցված էր որպես նախընտրական ծրագիր ներկայացվող «15 առաջնահերթ քայլերը» կոչվող փաստաթղթի շուրջ, որն ամբողջությամբ նվիրված է տնտեսական և սոցիալական խնդիրներին: Մարտի 9-ին «Մեդիա կենտրոնում» կայացած ասուլիսին պատգամավորության թեկնածու Վարդան Բոստանջյանը ասել է, որ ընտրողներին առաջարկվող 15 կետերն իրատեսական են, բայց դրանք կյանքի կոչելու համար պետք է հարկային դաշտ բերել ստվերային տնտեսությունը: Անդրադառնալով արտաքին կապերին՝ բանախոսը նշել է, որ այժմ դեռ հարկավոր է կարգի բերել երկրի ներքին վիճակը, հետո միայն զբաղվել ինտեգրման խնդիրներով: Նույն օրը «Փաստարկ» ակումբում անցկացված ասուլիսում Վարդան Բոստանջյանը հայտարարել է. տնտեսությունը կարող է զարգանալ միայն ազատ մրցակցային պայմաններում: Մարտի 14-ին «Հայելի» ակումբում տեղի ունեցած ասուլիսին պատգամավորության թեկնածու Զորիկ Զոհրաբյանն անդրադարձել է թեթև արդյունաբերությանը. նա ընդգծել է, որ այն այժմ «ճղճիմ» վիճակում է՝ համեմատած խորհրդային ժամանակաշրջանի հետ, մինչդեռ կան զարգացման հնարավորություններ: Անդրադառնալով ներդրումներին՝ բանախոսն ընդգծել է դրանց նպատակային, թիրախավորված օգտագործելու անհրաժեշտությունը: Դաշինքի ցուցակով առաջադրված մեկ այլ թեկնածու Վահե Էնֆիաջյանը մարտի 15-ի ասուլիսում, հղում կատարելով 15 առաջնահերթ կետերին, ընդգծել է դրանցից մի քանի կարևորագույնը. փոքր և միջին բիզնեսին հարկերից ազատում, հարկային պարտավորություններին վերաբերող տույժերի և տուգանքների մասով առաջարկվող համաներում, հանքարդյունաբերության ոլորտում քաղաքականության վերանայում:

Պատգամավորության թեկնածու Միքայել Մելքումյանը մարտի 21-ին «Փաստարկ» ակումբում կայացած ասուլիսին հայտարարել է, որ իշխանության գալու դեպքում կուսակցությունը երկրում կապահովի 6 տոկոս տնտեսական աճ, որը պայմանավորված է լինելու մենաշնորհների վերացմամբ, կառավարման մոդելի փոփոխմամբ, շուկայի ազատականացմամբ, ներդրումների ավելացմամբ: ԵԱՏՄ-ին միանալուն կողմ լինելու դաշինքի դիրքորոշումն էլ բանախոսը պայմանավորել է երկրի անվտանգությունն ապահովելու անհրաժեշտությամբ: Իսկ պատգամավորության թեկնածու Արարատ Զուրաբյանը մարտի 24-ին «Հայելի» ակումբում համոզմունք է հայտնել, որ դաշինքի կողմից նախատեսվող 6 տոկոս տնտեսական աճը մուլտիպլիկատիվ էֆեկտ է ունենալու և հանգեցնելու է երկարատև զարգացման:

Մարտի 27-ին «Պոստ Սկրիպտում» մամուլի ակումբում կայացած ասուլիսին Վարդան Բոստանջյանը, քննադատելով իշխանության կողմից իրականացվող տնտեսական քաղաքականությունը, նշել է, որ Հայաստանի ՀՆԱ-ում փոքր և միջին ձեռնարկատիրության մասնաբաժինը դաշինքը մտադիր է հասցնել 65-70 տոկոսի, ինչը բնորոշ է քաղաքակիրթ երկրների տնտեսություններին: Սրա միջոցով կնվազեցվի նաև եկամուտների ծայրաստիճանի բևեռացվածությունը: Քանի որ

Ֆինանսական շուկան էլ չի նպաստում գործարարությամբ զբաղվելուն, դաշինքն առաջարկում է տնտեսվարող սուբյեկտների համար ստեղծել բարենպաստ պայմաններ՝ տրամադրել ցածր տոկոսադրույքներով վարկեր, մեղմացնել հարկային քաղաքականությունը:

Մարտի 30-ին «Տեսակետ» մամուլի ակումբում Միքայել Մելքումյանն անդրադարձել է ՀՀ-ում ներդրումների սակավությանը՝ պայմանավորելով այն արտոնությունների վրա հիմնված բիզնես միջավայրով և վստահության բացակայությամբ: Դա արտահայտվում է նախևառաջ հարկային քաղաքականության մեջ: Այդպիսի արտոնությունների պայմաններում բացակայում է արդար մրցակցությունը: Բիզնեսի զարգացման համար պետք է կարգուկանոն հաստատվի բանկային համակարգում, ինչը և նախատեսում է անել դաշինքը իշխանության գալու դեպքում: Ըստ Մելքումյանի՝ Հայաստանը պետք է դառնա արդյունաբերական երկիր. փոքր բիզնեսը պետք է հնարավորություն ստանա դառնալու միջին, միջինը՝ խոշոր ձեռնարկություն: Յուրաքանչյուր մարզում պետք է ստեղծվեն արդյունաբերական գոտիներ, իսկ հանքարդյունաբերության ոլորտում քաղաքականությունը վերանայման կարիք ունի. օրինակ անհրաժեշտ է վաճառել ոչ թե պղնձի խտանյութը, այլ վերջնական արդյունքը: Ըստ բանախոսի՝ համագործակցելով ԵԱՏՄ շրջանակներում՝ Հայաստանը կարող է դառնալ ռազմարդյունաբերության կենտրոն և Ռուսաստան-Ուկրաինա հակամարտության պայմաններում շատ ռազմական պատվերներ ստանալ:

Սոցիալական ոլորտ: Դիտարկման առաջին փուլում դաշինքի անդամները սոցիալական հարցերին նվիրել են իրենց ելույթների մոտ մեկ երրորդը՝ մատնանշելով կենսաթոշակների բարձրացման, քաղաքացիներին աշխատանք, արժանավայել վարձատրություն և կենսակերպ ունենալու հնարավորությունների, առողջապահությունը բնակչության համար մատչելի դարձնելու հետ կապված խնդիրները:

Ոլորտում անելիքների առումով դաշինքի ներկայացուցիչները մասնավորապես նշել են, որ իրականացնելու են փոփոխություններ, որոնց մասին երազել են աղքատ, ընչազուրկ քաղաքացիները (Տիգրան Ուրիխանյան, փետրվարի 24, «Հայելի» ակումբ): Մասնավորապես, առողջապահության առումով ասվել է, որ այն պետք է ուղղված լինի մարդկանց կարիքների բավարարմանը և ոչ թե դիտվի գուտ շահույթ բերող բիզնես: Բացի այդ, նախատեսում են բարենպաստ պայմաններ ստեղծել, որպեսզի քաղաքացին սեփական գաղափարները կարողանա իրագործել և այդկերպ ապահովի իր զբաղվածությունն ու եկամուտ ստանալը:

Այս քաղաքական ուժը մտադիր է կենսաթոշակները բարձրացնել 25 հազար դրամով, ընդ որում՝ վստահեցնում է, որ դա հաշվարկված թիվ է, և տնտեսական աճի մեկ տոկոսը կբավարարի այդ խնդիրը լուծելու համար (Միքայել Մելքումյան, փետրվարի 28, «Sputnik Արմենիա»):

Նախկին ԽՍՀՄ Խնայբանկում ավանդների փոխհատուցման առումով դաշինքը ողջունելի է համարում իրականացվող նախաձեռնությունը: Միաժամանակ ընդգծվում է, որ աղքատ զանգվածի ակնկալիքները չափազանց մեծ են, մինչդեռ ամբողջ ծավալով այդ ծրագիրն իրականացնելն անհնարին է, քանի որ 10 միլիարդ դոլարին գերազանցող ավանդները պետությունն ի գործու չի լինի վերադարձնել (Վարդան Բոստանջյան, փետրվարի 20, «Հայելի» ակումբ):

Դիտարկման երկրորդ փուլում, երբ դաշինքն արդեն հրապարակել էր իր «15 առաջնահերթ քայլերը», բանախոսները սոցիալական հարցեր արծարծելիս ավելի հաճախ էին հղում կատարում այդ փաստաթղթին: Դրա հետ մեկտեղ որոշ թեկնածուներ ներկայացրել են նաև այս ոլորտին վերաբերող խնդիրների լուծման լրացուցիչ մոտեցումներ և գործողություններ: Մասնավորապես՝ մարտի 14-ին «Հայելի» ակումբում պատգամավորության թեկնածու Զորիկ Զոհրաբյանը նշել է, որ գործազրկությունը մեղմելու համար 90-ական թվականներին սեփականաշնորհված, բայց չգործող արտադրական տարածքների տերերի հետ նախնական պայմանավորվածություններ են ձեռք բերվել՝ գործարանների վերագործարկման ու աշխատատեղեր ստեղծելու մասին: Մարտի 1-ին Վահե Էնֆիաջյանը, կրկին հղում կատարելով 15 քայլերին, ընդգծել է աշխատավարձերը, կենսաթոշակները բարձրացնելու իրենց մտադրությունը և վստահեցրել, որ ֆինանսական աղբյուրները հաշվարկված են, իսկ թվերը՝ հիմնավորված: Նույն մոտեցումն են ցուցաբերել իրենց ասուլիսներում Արարատ Զուրաբյանը (մարտի 20, «Հայացք»), Միքայել Մելքումյանը (մարտի 21, «Փաստարկ», մարտի 30, «Տեսակետ») և Վարդան Բոստանջյանը (մարտի 27, «Պոստ Սկրիպտում»):

Դիտարկման երրորդ փուլում դաշինքի ներկայացուցիչները ոչ մի ասուլիս չեն տվել:

«Կոնգրես-ՀԺԿ» կուսակցությունների դաշինք

Տնտեսական ոլորտ: Դիտարկման առաջին փուլի ասուլիսների ընթացքում այս ընդդիմադիր դաշինքն ընդգծում էր, որ երկիրը տնտեսապես փլուզվում է և խոստանում էր, որ ընտրություններին հաջողության հասնելու պարագայում պատրաստ է Հայաստանում այնպիսի մոդեռնիզացիոն ծրագրեր իրականացնել, որոնք կապահովեն 6-7 տոկոս տնտեսական աճ, որի դեպքում հնարավոր կլինի 12 տարվա ընթացքում տնտեսության ծավալները կրկնապատկել: Այս ամենի մասին փետրվարի 24-ին «Մեդիա կենտրոն»-ում տեղի ունեցած ասուլիսին բարձրաձայնել է Լևոն Զուրաբյանը: Նա ավելացրել է նաև, որ դաշինքը կազմաքանդելու է մենաշնորհները և պարզեցնելու է հարկային համակարգը. 16 հարկատեսակները նվազեցնելով, հասցնելու է 6-ի:

Դաշինքի ընտրական ցուցակում 4-րդ հորիզոնականը զբաղեցնող Զոյա Թադևոսյանն էլ մարտի 4-ին «Հայք» կենտրոնում տեղի ունեցած ասուլիսում նշել է, որ տնտեսությունը չի կարող զարգանալ պատերազմական պայմաններում, իսկ չզարգացող տնտեսությունը հանգեցնում է կապիտալի արտահոսքի: Նրա հաշվարկով վերջին 10 տարիների ընթացքում 10 միլիարդ դոլար արտահոսք է եղել: Զոյա Թադևոսյանի համոզմամբ՝ տնտեսության ծանր վիճակը պայմանավորված է աշխատուժի, ֆինանսների ծավալների, ինչպես նաև օտարերկրյա ներդրումների սակավությամբ: Ըստ դաշինքի՝ այս խնդիրները հնարավոր չի լինի լուծել պատերազմական պայմաններում, հետևաբար առաջնահերթությունը խաղաղությունն հաստատելն է:

Դիտարկման երկրորդ փուլում, չնայած ասուլիսների հիմնական մեխը դարաբաղյան խնդրի խաղաղ կարգավորումն էր, այդուհանդերձ, տնտեսական

խնդիրներ նույնպես արծարծվում էին: Մարտի 10-ին «Հայացք» ակումբում տեղի ունեցած ասուլիսի ընթացքում պատգամավորության թեկնածու Ջոյա Թադևոսյանը միմյանց հետ կապեց պատերազմական պայմաններն ու տնտեսության վիճակը՝ ընդգծելով, որ այսօրվա պայմաններում դժվար է ներդրումների աճ ակնկալել: Իրավիճակը ծանրանում է նաև կապիտալի և աշխատուժի արտահոսքի պատճառով: Անդրադառնալով ինտեգրացիոն գործընթացներին՝ բանախոսը նշել է, որ նախքան ԵԱՏՄ-ի և ԵՄ-ի միջև ընտրություն կատարելը Հայաստանին անհրաժեշտ է նախ հարևան երկրների հետ սերտորեն համագործակցել և ինտեգրվել, հետո մտածել այլ կառույցներին միանալու մասին: «Կոնգրես-ՀԺԿ» դաշինքի մյուս ներկայացուցիչ Արամ Մանուկյանը մարտի 15-ին «Հողված» ակումբում հստակ թվերով ներկայացրել է, թե Հայաստանը որքանով է տնտեսապես հետ մնում Ադրբեջանից: Բանախոսն ընդգծել է, որ խաղաղության հասնելու համար պետք է ուժեղ լինել, իսկ դրա համար անհրաժեշտ է բացել սահմանները և ներդրումների բարենպաստ միջավայր ստեղծել, զարգացնել արդյունաբերությունը:

Դաշինքի մեկ այլ թեկնածու Վահագն Խաչատրյանը մարտի 15-ին «Մեդիա կենտրոն»-ում, վերլուծելով Հայաստանի տնտեսական վիճակը, նշել է, որ իշխանությունները կարծես ամեն ինչ անում են, որ փոքր և միջին բիզնեսը ոտքի չկանգնի: Տնտեսությունը ճգնաժամային վիճակում է, ունենք ընդամենը 0,2 տոկոս աճ: Իսկ իր՝ մարտի 17-ին «Հողված 3»-ում կայացած ասուլիսին Խաչատրյանը ճգնաժամային իրավիճակը նկարագրելու համար մանրամասներ և հստակ թվեր է ներկայացրել: Այս իրավիճակից դուրս գալու համար դաշինքն առաջարկում է փոխել համախառն եկամտի վերաբաշխման ամբողջ համակարգը: Բացի այդ, առաջարկվում է փոքր և միջին բիզնեսի նկատմամբ 3-5 տարով հարկային մարատորիում հայտարարել: Վահագն Խաչատրյանը նշել է, որ Հայաստանին օդուղիի պես տնտեսական աճ է հարկավոր, իսկ դրա համար հարկավոր է բացել սահմանները, տարածաշրջանային համագործակցությունը զարգացնել, հարևանների հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատել: Բանախոսը նաև ընդգծել է, որ Հայաստանի տնտեսական խնդիրները գտնվում են քաղաքական դաշտում, ըստ այդմ՝ երկրում ամեն ինչ պետք է 180 աստիճանով փոխել: Նախընտրական ծրագրով նախատեսվում է պետական բյուջե վերադարձնել 1991 թվականից ապօրինի հարստացմամբ ձեռք բերված միջոցները, անհրաժեշտ է ազատ առևտրի պայմաններ ստեղծել՝ աշխարհի բոլոր երկրների հետ համագործակցելու համար: Անդրադառնալով արտաքին հարաբերություններին՝ թեկնածու Վլադիմիր Կարապետյանը մարտի 17-ին «Մեդիա կենտրոնում» հայտարարել է, որ ԵԱՏՄ-ն ու ԵՄ-ն ամբողջությամբ հակասության մեջ են, և իրատեսական չէ առանց ԵԱՏՄ-ից դուրս գալու տնտեսական բաղադրիչ պարունակող ասոցացման համաձայնագրի շուրջ բանակցություններ սկսել:

Մարտի 21-ին «Մեդիա կենտրոնում» կայացած ասուլիսին Վահագն Խաչատրյանն անդրադարձել է հանքարդյունաբերության խնդիրներին, և այս առումով էլ նշել, որ փակ սահմանները խանգարում են հանքանյութի իրացմանը՝ բացասաբար ազդելով ինքնարժեքի վրա:

Մարտի 23-ին «ՀԱԿ» գրասենյակում կայացած ասուլիսում Լևոն Ջուրաբյանը նշել է, որ Հայաստանին ոչ թե ուղղակի, այլ թոնիչքաձև տնտեսական աճ է պետք, որպեսզի կարողանա ապահովել իր անվտանգությունը: Իսկ այդպիսի աճ հնարավոր է միայն դարաբաղյան հակամարտությունը կարգավորելու և բաց սահմանների

պայմաններում: Բանախոսը նաև ընդգծել է, որ դրսի տրանսֆերտների վրա հույս դնելն անկենսունակ մոդել է:

Սոցիալական ոլորտ: Դիտարկման առաջին փուլի ասուլիսների ընթացքում դաշինքի ներկայացուցիչները սոցիալական խնդիրներին գրեթե չեն անդրադարձել, միակ բացառությունը մարտի 4-ին «Հայք» կենտրոնում կայացած ասուլիսի ժամանակ Ջոյա Թադևոսյանի ակնարկն է առ այն, որ «Ժողովուրդն աղքատ, ծայրահեղ ծանր վիճակում է»:

Դիտարկման երկրորդ փուլում դաշինքի ներկայացուցիչները շատ ավելի հաճախ են անդրադարձել սոցիալական խնդիրներին: Այսպես, Վահագն Խաչատրյանը մարտի 15-ին «Մեդիա կենտրոն»-ում անդրադարձել է առողջապահական խնդիրներին ու համոզմունք հայտնել, որ այս ոլորտում պետք է ակտիվորեն կիրառվի ապահովագրական համակարգը: Բանախոսը մատնանշել է նաև կուտակային կենսաթոշակային համակարգի խոցելի կողմերը, և որպես դրական օրինակ առաջարկել է օգտագործել ավտոմեքենաների ապահովագրման հաջողված մոդելը: Ըստ Վահագն Խաչատրյանի՝ երկրում սրընթաց սոցիալական բևեռացվածությունը հանգեցրել է սոցիալական անհանդուրժողականության: Սա հաղթահարելու համար դաշինքն իր ծրագրում առաջարկել է շնորհապետության գաղափարը, այսինքն՝ մարդիկ ըստ արժանիքի պետք է վարձատրվեն, հասարակության մեջ իրենց տեղն ունենան և ոչ թե հակառակը: Չնայած դաշինքն ազատական գաղափարների կրող է, այդուհանդերձ, երկրի տնտեսական վիճակը թելադրում է առանձնահատուկ ուշադրություն դարձնել այն խավին, որն անձարունակ է, ինչպես նաև հոգալ կենսաթոշակների, նվազագույն աշխատավարձի բարձրացման, գազի, էլեկտրաէներգիայի սակագների իջեցման մասին: Վահագն Խաչատրյանի համոզմամբ՝ աղքատ խավին պետք է ոտքի կանգնելու հնարավորություն տալ: Այս մտքերը Վահագն Խաչատրյանը զարգացրել է նաև մարտի 17-ին «Հողված 3» ակումբում՝ ընդգծելով, որ հասարակական արդյունքից օգտվող մարդկանց թիվը պետք է ավելացնել, այսօր պաշտոնական վիճակագրության համաձայն՝ աղքատության մակարդակը 29,8 տոկոս է: Աղքատության թեմային անդրադարձել է նաև պատգամավորության թեկնածու Արամ Մանուկյանը մարտի 21-ին «Հայացք» ակումբում կայացած ասուլիսում: Նրա խոսքով՝ թշվառությունը համատարած է, հացի խնդիրը սուր է դրված հատկապես հեռավոր գյուղերում:

Դիտարկման երրորդ փուլում դաշինքի ներկայացուցիչները ոչ մի ասուլիս չեն տվել:

Հայաստանի Հանրապետական կուսակցություն

Տնտեսական ոլորտ: Դիտարկման առաջին փուլում ՀՀԿ-ի ներկայացուցիչներն իրենց 17 ասուլիսների ընթացքում ընդամենը 7 րոպե 45 վայրկյան են հատկացրել տնտեսական հարցերին: Սա կարելի է արտառոց երևույթ համարել իշխող կուսակցության համար: ՀՀԿ-ականները, որպես կանոն, խուսափել են տնտեսական վիճակին գնահատականներ տալ: Այս առումով բացառություն է միայն Վարդան Այվազյանի նկատառումը. «Որ Հայաստանում սոցիալ-տնտեսական վիճակը վատ է, բոլորս գիտենք» (մարտի 1-ին «Հայելի» ակումբում կայացած մամուլի ասուլիս): Բանախոսները չեն հնչեցրել այս ոլորտին վերաբերող առաջարկություններ

սահմանափակվելով միայն իրականացվող քաղաքականության հիմնավորումներով: Մասնավորապես, Գագիկ Մինասյանը մարտի 1-ին «Բլից ինֆո» և մարտի 3-ին «Փաստարկ» մամուլի ակումբներում տեղի ունեցած ասուլիսներին նշել է, որ Հայաստանին ի վերջո հաջողվեց իրականացնել «և-և»-ի (այսինքն՝ և ԵԱՏՄ-ին անդամակցելու, և Եվրամիության հետ համագործակցելու) քաղաքականությունը, չնայած՝ ի սկզբանե ԵՄ-ում այդպիսի համադրման կոնսենսուս չկար, և մեզ պարտադրվում էր «կամ-կամ»-ի ընտրությունը: Ըստ Բանախոսի՝ Արևելյան գործընկերության այն երկրները, որոնք գնացին այդ ճանապարհով, լուրջ մարտահրավերների բախվեցին, իսկ Հայաստանին հաջողվեց խուսափել դրանցից: Հիմա Եվրամիությունն ավելի ճկուն մոտեցում է ցուցաբերում, և այն շրջանակային համաձայնագիրը, որ պատրաստվում ենք ստորագրել, լայն հնարավորություն է ստեղծում տնտեսական համագործակցության համար: Ավելին՝ Հայաստանը դարձել է շահերի ոչ թե հակադրման, այլ համադրման օղակ, որի միջոցով հնարավոր է իրականացնել տնտեսական համագործակցություն ԵՄ և ԵԱՏՄ միջև, ինչպես նաև նպաստել, որ թե ԵՄ-ն, թե ԵԱՏՄ-ն Հայաստանի միջոցով իրականացնեն տնտեսական համագործակցություն Իրանի հետ:

Դիտարկման երկրորդ փուլում՝ քարոզարշավի ընթացքում կայացած ասուլիսների ժամանակ, իշխող կուսակցությունն ավելի մեծ ուշադրություն է դարձրել տնտեսական թեմաներին: Սակայն այս փուլում էլ գլխավոր շեշտադրումը իրականացվող քաղաքականության հիմնավորումներ ներկայացնելն էր: Այսպես, մարտի 15-ին «Հայելի» ակումբում Խոսրով Հարությունյանը, խոսելով արտաքին պարտքի մասին, հակադարձել է ընդդիմախոսներին և ասել, որ վիճակն այս առումով ամեննին էլ վտանգավոր չէ, քանի որ երկիրը կարողանում է սպասարկել արտաքին պարտքը, և միջազգային ֆինանսական կառույցները շարունակում են համագործակցել կառավարության հետ: Բանախոսը մատնանշել է հարկային և մաքսային վարչարարությունում իրականացված որոշ քայլեր՝ հիմնականում տալով դրանց դրական գնահատական: Որպես չլուծված խնդիր՝ Խոսրով Հարությունյանը մատնանշել է վարկային և բյուջետային միջոցները ծախսելու արդյունավետությունն ու նպատակայնությունը ապահովելու անհրաժեշտությունը: Բանախոսը համաձայն չէ նաև այն ընդդիմադիր մրցակիցների հետ, որոնք համոզմունք են հայտնում, որ հանքարդյունաբերության ոլորտում բնօգտագործման հարկերը պետք է բարձրացնել: Նա անհնարին է համարում նաև ստվերային տնտեսության նվազեցումն այն չափով, որքանով առաջարկում են մյուս քաղաքական ուժերը: Անդրադառնալով Հանրապետական կուսակցության տնտեսական առաջարկներին՝ Խոսրով Հարությունյանը նշել է, որ Հայաստանը պետք է լուծի մրցունակ ապրանքներ արտաքին շուկա արտահանելու խնդիրը: Այս առումով առաջարկվում է հետևել Հարավ-արևելյան Ասիայի երկրների փորձին և ներդրումներ ներգրավելու միջոցով մրցունակ արտադրություն ունենալ: Անհրաժեշտ է ստեղծել ներդրումների խթանման հիմնադրամ՝ կառավարության և պոտենցիալ ներդրողների մասնակցությամբ և միաժամանակ ձևավորել բարենպաստ հարկային միջավայր ու վստահության մթնոլորտ:

Մարտի 17-ին «Հայելի» ակումբում կայացած ասուլիսին պատգամավորության թեկնածու Վահրամ Բաղդասարյանը նույնպես հանգստացնում էր ընտրողներին՝ պնդելով, որ արտաքին պարտքը վտանգավոր չէ: Ինչ վերաբերում է պետական բյուջեին, ապա 2017-ին տնտեսությունը կայունացնելու նպատակ ունի, իսկ աճը

նախատեսվում է 2018-2020 թվականներին: Մարտի 23-ին էլ պատգամավորության թեկնածու Անանիա Մաղաքյանը հիշեցրել է, որ վարչապետ Կարեն Կարապետյանը նախընտրական հանդիպումներում խոսք է տվել մեկ տարվա ընթացքում երկու ներդրումային ծրագիր իրականացնել՝ 3,2 միլիարդ և 5,3 միլիարդ դոլարի չափով: Շատ թե քիչ քննադատական մոտեցումներ է ցուցաբերել պատգամավորության թեկնածու Լեոնիկ Ալեքսանյանը մարտի 24-ին «Հենարան» ակումբում կայացած ասուլիսին՝ նշելով, որ գործող շուկայական հարաբերությունները վնասում են Հայաստանի տնտեսությանը, քանզի ձևավորված չեն այն ինստիտուտները, որոնք պետք է կարգավորեն դրանք: Դրան հակառակ պատգամավորության թեկնածու Հերմինե Նաղդալյանը մարտի 25-ին «Sputnik Արմենիա» մամուլի կենտրոնում ընդամենը գոհունակություն հայտնեց նոր կառավարության առաջին ամիսների գործունեության վերաբերյալ՝ չխոսելով ոչ թերությունների, ոչ էլ տնտեսության զարգացման հեռանկարների մասին:

Դիտարկման երրորդ փուլի ասուլիսների ընթացքում կուսակցության ներկայացուցիչները տնտեսական խնդիրներին չեն անդրադարձել:

Սոցիալական ոլորտ: Դիտարկման առաջին փուլի ասուլիսների ընթացքում ՀՀԿ-ական բանախոսները որևէ անդրադարձ չեն կատարել սոցիալական խնդիրներին ու դրանց լուծումներին, եթե հաշվի չառնենք «սոցիալական» բառի երկու հիշատակումները տնտեսական հարցերն արժարծելիս:

Դիտարկման երկրորդ փուլում, ի տարբերություն առաջինի, իշխող կուսակցության ներկայացուցիչները որոշ անդրադարձ կատարել են սոցիալական թեմաներին: Այսպես, մարտի 15-ին «Հայելի» ակումբում Խոսրով Հարությունյանն անդրադարձել է առողջապահությանը ու խոստովանել, որ մի սովոր զանգվածի համար այն մատչելի չէ, բայց հավաստիացրել է, որ այդ խնդիրն այժմ լուծման փուլում է: Կուսակցության ցուցակով առաջադրված Հայկ Բաբուխանյանը, մարտի 20-ին «Նոյյան տապան» մամուլի սրահում խոսելով արտագաղթի մասին, նշել է, որ այն կանխելու համար պետք է լուծել սոցիալ-տնտեսական հարցերը, որպեսզի մարդիկ իրենց երկրում կարողանան ապահովել իրենց ապրուստը: Անդրադառնալով նույն թեմային՝ թեկնածու Անանիա Մաղաքյանը մարտի 31-ին «Հայելի» ակումբում ընդգծել է, որ արտագաղթի և գործազրկության պատճառն անարդարությունն է: Մարտի 24-ին «Մեդիա կենտրոն»-ում կայացած ասուլիսին Ռուզաննա Մուրադյանն անդրադարձել է կրթության ոլորտին և ներկայացրել է անապահով ընտանիքների աշակերտների և ուսանողների համար սոցիալական նպաստներ տրամադրելու ծրագրերը: Ոլորտի այլ խնդիրներին ու հնարավոր լուծումների մասին խոսք չի եղել:

Քիչ չէին դեպքերը, երբ հանրապետականները վերացական արտահայտություններ էին անում երկրում տիրող սոցիալական վիճակի մասին՝ չանդրադառնալով ոչ պատճառներին, ոչ էլ ծրագրային անելիքներին: Օրինակ, «Մարդկանց ամենից շատ հետաքրքրում է աշխատատեղերի խնդիրը, ժողովրդին ավելի շատ հետաքրքրում են սոցիալական խնդիրները» (Վարդան Այվազյան, մարտի 23, «Տեսակետ» ակումբ), «Երկրում բավական մեծ զանգված կա, որը ցածր բարեկեցության մակարդակ ունի» (Հերմինե Նաղդալյան, մարտի 25, «Sputnik Արմենիա»), «Սոցիալ-տնտեսական վիճակը Հայաստանում ծանր է» (Արագած Ախոյան, մարտի 29, «Հայելի» ակումբ):

Միայն երրորդ փուլի՝ հետընտրական ասուլիսներից մեկի ժամանակ (ապրիլի 6, «Հայելի» ակումբ) հանրապետական Լեռնիկ Ալեքսանյանը մատնանշել է սոցիալական բևեռացվածությունը՝ որպես համար մեկ խնդիր:

Հայաստանի Կոմունիստական կուսակցություն

Տնտեսական ոլորտ: Դիտարկման առաջին փուլում կուսակցության ցուցակը գլխավորող Տաճատ Սարգսյանը փետրվարի 17-ին «Մոսկվայի տանը» կայացած ասուլիսին, վկայակոչելով ՀՀ Սահմանադրությունը, ընդգծել է, որ ընդերքը պատկանում է ժողովրդին, և արտահայտել այն դիրքորոշումը, որ հանքերը անհրաժեշտ է պետականացնել և շահույթը ուղղել պետբյուջե: Կոմունիստները համոզված են, որ մանր հողատարածքների վրա չի կարող գյուղատնտեսություն զարգանալ, հետևաբար՝ հարկավոր է խոշոր տնտեսություններ ստեղծել: Ըստ Տաճատ Սարգսյանի՝ հարկավոր է խիստ հսկողություն սահմանել բանկային համակարգի նկատմամբ՝ տնտեսության զարգացմանը նպաստելու նպատակով:

Կուսակցության ցուցակի երկրորդ համարը՝ Վազգեն Սաֆարյանը, նույն ասուլիսի ժամանակ ընդգծել է, որ երկրի արդյունաբերությունը վատ վիճակում է, քանի որ տնտեսական կապերը ԱՊՀ երկրների հետ, ինչպես նաև ներտնտեսական ինտեգրացիան բավարար չէ և դրական արդյունք չի տալիս: Հետևաբար, ընտրություններին 5 տոկոսանոց սահմանը հաղթահարելու և Ազգային ժողովում հայտնվելու պարագայում առաջարկելու են տնտեսական քաղաքականությունում արմատական փոփոխություններ իրականացնել, մասնավորապես՝

- Մեծացնել պետական միջամտությունը տնտեսության մեջ, որպեսզի հենց պետությունը կառավարի և կարգավորի այն,
- Գյուղատնտեսության զարգացման համար կոմունիստները նախատեսում են վերստեղծել խորհրդային տարիներին գործող մեքենատրակտորային, սերմնաբուծական, տոհմաբուծական կայանները: Գյուղացու արտադրած ապրանքն իրացնելու համար ստեղծել սպառողական կոոպերացիա,
- Արդյունաբերության մոբիլիզացմանն ուղղված օրենքներ մշակել և անցկացնել խորհրդարանում, որոնք հնարավորություն կտան կոոպերացիա ստեղծել ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտաքին աշխարհի և առաջին հերթին Ռուսաստանի հետ: Դրա շնորհիվ հնարավոր կլինի էապես բարձրացնել համախառն ներքին արդյունքի մեջ արդյունաբերության բաժինը, որն այսօր ընդամենը 17 % է:

Ավելի ուշ՝ փետրվարի 27-ին կայացած ասուլիսում, Վազգեն Սաֆարյանը նշել է, որ պետությունն ինքը պետք է տնօրինի խոշոր գործարանները: Առհասարակ տնտեսական զագացման խնդիրները կոմունիստներն անմիջականորեն կապում են արդյունաբերության զարգացման հետ:

Անդրադառնալով արտաքին տնտեսական կապերին՝ կուսակցության ղեկավարները նշել են, որ իրենք կողմ են արտահայտվել Հայաստանի անդամակցությանը ԵՄԿԿ-ին, քանի որ երկու խնդիր է լուծվում՝ վերականգնվում են տնտեսական կապերը նախկին խորհրդային հանրապետությունների հետ և 170 միլիոնանոց եվրասիական շուկա մուտք գործելու հնարավորություն է ստեղծվում: Առայժմ արդյունքներ չի նկատվում, քանի որ այդ

կապերը վատ են օգտագործվում: Կուսակցությունը նպաստելու է այդ կապերի արդյունավետությունը բարձրացնելուն:

Դիտարկման երկրորդ փուլում կոմունիստներն իրենց ասուլիսներում էլ ավելի մեծ ուշադրություն են դարձրել տնտեսական խնդիրներին: Որպես կանոն՝ նրանք անդրադարձ են կատարել խորհրդային ժամանակաշրջանին և պնդել, որ Հայաստանը կրկին պետք է դարձնել արդյունաբերական երկիր:

Մասնավորապես, Նաիրա Մարտիրոսյանը մարտի 8-ին «Հայելի» ակումբում, վերհիշելով սոցիալիստական երկիրը, նշել է, որ հիմա ոչինչ չունենք, գործարանները չեն աշխատում, շուկայական հարաբերություններն ըստ նրա՝ իրենց չեն արդարացնում, որպես լուծում՝ առաջարկվում է արդյունաբերության վերականգնումը, գործարանների վերագործարկումը: Նույն մոտեցումը ցուցաբերել է պատգամավորության թեկնածու Դմիտրի Ադբաշյանը՝ խոսելով ավիացիայի մասին, որը խորհրդային տարիներին շատ հզոր էր, իսկ հիմա խղճուկ վիճակում է: Ըստ Բանախոսի՝ այսօրվա պայմաններում անհրաժեշտ է ընդունել նոր Օդային օրենսգիրք:

Արդյունաբերության վերականգնման ուղիները, կոմունիստների տեսանկյունից, ավելի մանրամասն ներկայացրել է ընտրական ցուցակում երկրորդ համարը զբաղեցնող Վազգեն Սաֆարյանը, ով մարտի 10-ին «Հայացք» ակումբում նշել է, որ պետությունը պետք է կլորի դերակատարություն ունենա տնտեսական քաղաքականության մեջ, ավելացնի տնտեսվարող սուբյեկտների պետական մասնաբաժինը: Ըստ Բանախոսի՝ «Նաիրիտը» և Վանաձորի քիմպրոմը պետք է վերագործարկվեն, տեղական հումքի՝ պղնձի, մոլիբդենի, ոսկու, արծաթի մշակումն իրականացվի տեղում: Իսկ այդ ծավալուն խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է ստեղծել Արդյունաբերության և արտաքին կապերի նախարարություն: Բացի դա, կոմունիստներն առաջարկում են խորացնել հարաբերությունները ԵԱՏՄ շրջանակներում՝ ստեղծելով համատեղ ձեռնարկություններ և միասնական տնտեսություն:

Մարտի 13-ին «Հայելի» ակումբում պատգամավորության թեկնածու Սիլվա Ադամյանն անդրադարձել է հանքարդյունաբերությանը՝ նշելով, որ դրա զարգացումը հարստացնում է գործարարին, իսկ պետությունը չի ստանում այն շահույթը, որը կարող էր այլ խնդիրներ լուծելու համար օգտագործել:

Կուսակցության ղեկավար Տաճատ Մարգարյանն էլ, մարտի 13-ին «Փաստարկ» ակումբում անդրադառնալով նույն թեմային, էլ ավելի հեռուն գնացող առաջարկներ է ներկայացրել՝ պետականացնել հանքերն ու հումքերը: Իսկ գյուղատնտեսության զարգացումը Բանախոսը տեսնում է կոլեկտիվ տնտեսությունների վերականգնման մեջ: Տաճատ Մարգարյանը համոզմունք է հայտնել, որ տնտեսության զարգացմանը կօգնի ԵԱՏՄ-ն, որին անդամակցելը կոմունիստները ողջունում են:

Պատգամավորության թեկնածու Իրինա Հովակիմյանը մարտի 14-ին «Հայելի» ակումբում հայտարարել է, որ կոմունիստները հետամուտ են լինելու ռազմական արդյունաբերության զարգացմանը՝ երկրի անվտանգությունն ապահովելու նկատառումով: Մեկ այլ թեկնածու՝ Ասյա Օթարյանը, կարևորելով խոշոր արդյունաբերության զարգացումը, մարտի 15-ին «Հայելի» ակումբում բարձրաձայնել է կոմունիստների այն դիրքորոշումը, որ փոքր և միջին բիզնեսով երկիրը չի կարող առաջընթաց ունենալ: Վազգեն Սաֆարյանն էլ նույն օրը նույն ակումբում տեղի

ունեցած ասուլիսում հղում կատարելով ՀԿԿ ծրագրին՝ նշել է, որ կուսակցությունը կամուրջ է անցյալ ու ապագա հասարակության միջև տնտեսական քաղաքականությունը փոխելու առումով, ինչը կհանգեցնի 7-8 տոկոս աճի:

Նույն օրը մեկ այլ ակումբում՝ «Մեդիա կենտրոնում», Վազգեն Սաֆարյանը որպես լուրջ խնդիր՝ նշել է, որ բյուջեի գրեթե 34 տոկոսը ծախսվում է սոցիալական խնդիրների ուղղությամբ, ինչը սխալ տնտեսական քաղաքականության հետևանք է: Բանախոսն ընդգծել է պետության կարգավորիչ դերի բարձրացման, պետական պլանավորման մոդելի ներմուծման, շուկայական հարաբերությունների ուղղորդման, ներդրումային քաղաքականություն նախատեսող բյուջեների ստեղծման անհրաժեշտությունը: Մարտի 20-ին «Փաստարկ» ակումբում Վազգեն Սաֆարյանը կարևորեց ստվերային տնտեսության դեմ պայքարը, և որպես լուծում առաջարկեց անուղղակի հարկերի ճնշումը իջեցնել և հասցնել գրոյի, իսկ բյուջեի մուտքերը հավաքագրել միայն ուղղակի հարկերով՝ եկամտահարկով, շահութահարկով: Անդրադառնալով գյուղատնտեսության զարգացման խնդիրներին՝ բանախոսը նշել է մեքենատրակտորային կայանների ստեղծման և գյուղմթերքի վերամշակման անհրաժեշտության մասին:

Արդյունաբերության, այդ թվում «Նաիրիտի» և մյուս խոշոր ձեռնարկությունների վերագործարկման համար կոմունիստներն առաջարկում են օգտագործել բնակչության ավանդները՝ դրանց դիմաց տրամադրելով ավելի բարձր տոկոսով բաժնետոմսեր: Բացի դա, նախատեսում են ներգրավել էժան միջպետական վարկեր: Մարտի 31-ին «Հայելի» ակումբում Տաճատ Սարգսյանն ու Վազգեն Սաֆարյանն իրենց համատեղ ասուլիսում նշել են, որ կոմունիստները զարգացնելու են տրանսպորտային ենթակառուցվածքները, նոր հնարավորություններ են փնտրելու Հայաստան-Իրան Վանաձոր-Ֆիալետովո երկաթգծերի կառուցման համար:

Դիտարկման երրորդ փուլում ապրիլի 12-ին «Փաստարկ» ակումբում Վազգեն Սաֆարյանը, հաշվի առնելով ընտրությունների արդյունքները, ընդգծել է, որ խորհրդարան անցած բոլոր ուժերն առաջնորդվում են ազատական տնտեսական մոտեցումներով, հետևաբար տնտեսական քաղաքականությունը մշակելիս ԱԺ-ում լուրջ դիմակայություն չի լինի: Բանախոսը կրկին անդրադարձել է նախորդ ասուլիսներին հնչեցրած խնդիրներին և առաջարկվող լուծումներին՝ ընդգծելով, որ հանրությանը պետք է ներկայացնել և նրա գիտակցության մեջ արմատավորել արդյունավետ տնտեսական քաղաքականության մոդելների ներդրման պահանջը:

Սոցիալական ոլորտ: Դիտարկման առաջին փուլում Կոմունիստական կուսակցության ներկայացուցիչներն ընդամենը երկու ասուլիսների են մասնակցել և շատ ընդհանրացված են խոսել սոցիալական թեմաների մասին: ՀԿԿ գնահատմամբ՝ վերջին տարիներին ժողովուրդն էլ ավելի ծանր վիճակում է հայտնվել: Խորհրդարան անցնելու դեպքում կոմունիստները խոստանում էին ուշադրության կենտրոնում պահել իրավիճակի արմատական փոփոխությունները: Կուսակցությունն առաջնահերթ է համարում գործազրկության մակարդակի նվազեցումը և նոր աշխատատեղերի ստեղծումը: Հանքերը պետության սեփականությունը դարձնելով՝ կոմունիստները մտադիր են լուծել հրատապ սոցիալական խնդիրները. բարձրացնել կենսաթոշակները, ապահովել անվճար բուժսպասարկում:

Դիտարկման երկրորդ փուլում կոմունիստները 22 ասուլիս են տվել և, ինչպես արդեն նշել ենք, սոցիալական թեմաներ արծարծելու առումով առաջատարների

շարքում են հայտնվել: Կուսակցության ղեկավարներից Վազգեն Սաֆարյանը մարտի 10-ին «Հայացք» ակումբում կայացած ասուլիսին հայտարարել է, որ ժողովրդին պետք է վերադարձնել նրանից խլված սոցիալական երաշխիքները: Այս տեսակետից նա առաջնային է համարել մարդկանց աշխատանքով ապահովելը, ինչպես նաև առողջապահությունը յուրաքանչյուրի համար մատչելի դարձնելը: Շարունակելով այս մտքերը մարտի 15-ին «Մեդիա կենտրոն»-ում տեղի ունեցած ասուլիսում՝ Վազգեն Սաֆարյանը նշել է, որ գործազրկության հաղթահարման, աշխատատեղերի ստեղծման հարցերը կարող են լուծվել նախևառաջ խոշոր արդյունաբերության զարգացմամբ, ինչը նաև կնպաստի, որ նվազագույն աշխատավարձը բարձրացվի երկու անգամ: Իսկ ինչ վերաբերում է առողջապահության մատչելիությանը, ապա բանախոսը ներկայացրել է կուսակցության ծրագրային դրույթն առ այն, որ պետք է պետության մասնակցությամբ ապահովագրական գործակալություններ ստեղծել՝ երաշխավորելով յուրաքանչյուր մարդու բուժումը: Բացի դա, ՀԿԿ-ն առաջարկում է դեղերի վաճառքն ազատել ավելացված արժեքի հարկից, որպեսզի դրանց գինն էժանանա ու ավելի մատչելի դառնա բնակչության համար:

Կոմունիստները նախատեսում են առաջիկա հինգ տարիներին երկու անգամ բարձրացնել կենսաթոշակները: Մարտի 17-ին «Հայելի» ակումբում կայացած ասուլիսին Նաիրա Մարտիրոսյանն ու Սիլվա Ադամյանն անդրադարձել են գործազրկության ու սոցիալապես անպաշտպան լինելու խնդիրներին, իսկ լուծումը տեսնում են պետական մասնակցությամբ արդյունաբերության վերագործարկման մեջ: Ըստ կոմունիստների՝ գործազրկության հաղթահարումը կօգնի նաև էականորեն նվազեցնել արտագաղթը: Այլ ասուլիսներում կոմունիստները ներկայացրել են նաև այլ ծրագրային դրույթներ, որոնցով նախատեսվում է վերադառնալ անվճար կրթական համակարգին, ինչպես նաև անվճար դարձնել մանկապարտեզները: Իսկ կուսակցության ղեկավարները քարոզարշավի ընթացքում տված ասուլիսներում հատուկ ուշադրություն են դարձրել սոցիալական սթրեթեջ բևեռացմանը՝ նշելով, որ այն գնալով ակազմանում է և կարող է ծանր հետևանքներ ունենալ երկրի համար:

Դիտարկման երրորդ փուլում տված միակ ասուլիսին կուսակցության ներկայացուցիչը սոցիալական ոլորտին չի անդրադարձել:

«Օհանյան-Ըաֆֆի-Օսկանյան» կուսակցությունների դաշինք

Տեսնական ոլորտ: Դիտարկման առաջին փուլում ՕԲՕ-ի ընտրական ցուցակում երկրորդ տեղը զբաղեցնող Արմեն Մարտիրոսյանը փետրվարի 13-ին դաշինքի ձևավորման և դրա հետ կապված շնորհանդեսին իսկ խիստ քննադատաբար է գնահատել իրավիճակը երկրի տնտեսությունում՝ մատնանշելով ոլորտի զարգացումը խոչընդոտող հիմնական խնդիրները՝ համակարգային կոռուպցիա, բիզնեսի և իշխանության սերտաճում, արհեստական և ապօրինի մենաշնորհներ: Դրա հետ մեկտեղ դաշինքի ներկայացուցիչները մատնանշել են հետևյալը.

- Փոքր և միջին բիզնեսը ծանր հարկային բեռի տակ է,
- Ներդրումների սակավություն,
- Հայաստանում բյուջեն է թելադրում տնտեսական ծրագիրը, ոչ թե հակառակը,
- Արտաքին տնտեսական կապերն արդյունավետ չեն օգտագործվում,
- Հայաստանից ապօրինի արտահոսել է 10 միլիարդ դոլար,

- Գյուղատնտեսության ոլորտում արդյունավետ վարկավորում և սուբսիդավորում չի իրականացվում:

Նշված խնդիրները լուծելու համար դաշինքն անհրաժեշտ է համարում իրականացնել համակարգային փոփոխություններ, մշակել նոր տնտեսական ռազմավարություն՝ վերանայելով դրանում ներառված ոլորտներում իրականացվող քաղաքականությունը: Սրա հիմքում լինելու է տնտեսության ազատականացումը և զարգացման երաշխիքների ստեղծումը: Այդ նպատակով նախատեսվում է նաև.

- Իրականացնել փոքր և միջին բիզնեսի հարկային բեռի թեթևացում, ինչը կնպաստի տնտեսական աճին,
- Համախմբել սփյուռքի ներուժը և բարենպաստ պայմաններ ստեղծել արտերկրի հայրենակից գործարարների համար՝ ՀՀ-ում ներդրումներ իրականացնելու նպատակով,
- Արմատապես փոխել մոտեցումը տնտեսական քաղաքականության նկատմամբ. այն ձևավորվելու է ոչ թե պետական բյուջեի հնարավորություններից ելնելով, այլ ինքնուրույն՝ նպատակ ունենալով ստեղծել ավելի հզոր բյուջե,
- Եվրամիության հետ երկկողմ պայմանագրի ստորագրման միջոցով ներդնել ավելի բարձր տնտեսական ստանդարտներ, ինչը տնտեսությունը կդնի զարգացման ճիշտ ուղու վրա,
- Պայմաններ ստեղծել ԱՄՆ-ի կողմից ֆինանսավորվող «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագիրը Հայաստանում վերաբացելու համար: Դրա շնորհիվ հնարավոր կդառնա բարելավել գյուղական համայնքների ճանապարհները, զարգացնել գյուղական ենթակառուցվածքները, գյուղատնտեսական մթերքի վերամշակման փոքր ձեռնարկություններ հիմնել:

Դիտարկման երկրորդ փուլում դաշինքի ներկայացուցիչները թեև նկատելիորեն ավելի քիչ են անդրադարձել տնտեսական թեմաներին, այդուհանդերձ, բացի վերոհիշյալից, անդրադարձել են նաև այլ խնդիրների: Այսպես, եթե առաջին փուլում ընդհանուր խոսվում էր փոքր և միջին բիզնեսի հարկային բեռի թեթևացման մասին, ապա մարտի 10-ին «Հայացք» ակումբում կայացած ասուլիսին պատգամավորության թեկնածու Մուսաննա Մուրադյանը հստակեցրել է թեման՝ նշելով, որ ՕԸՕ-ն նախատեսում է մինչև 60 միլիոն դրամ շրջանառություն ունեցող ՓՄՁ-ներին 5 տարով ազատել հարկերից: Բյուջեի մուտքերի այդ պակասը կարող է լրացվել կապիտալի ապօրինի արտահոսքը դադարեցնելու միջոցով: Մարտի 17-ին «Մեդիա կենտրոն»-ում պատգամավորության թեկնածու Գեղամ Նազարյանը, անդրադառնալով արտաքին տնտեսական կապերին, հայտարարել է, որ դաշինքը չի նախատեսում սկսել ԵԱՏՄ-ից դուրս գալու գործընթաց, քանի որ կարծում է, որ ԵԱՏՄ-ն հսկայական շուկա է, ինչը Հայաստանի համար շատ կարևոր է: Մարտի 28-ին «Նոյյան տապան» մամուլի սրահում պատգամավորության թեկնածու Թերեզա Սարգսյանը տնտեսական քաղաքականությունում կարևորել է առողջ մրցակցության և ներդրումների համար նպաստավոր պայմանների ստեղծումը, մենաշնորհների վերացումը և ցածր տոկոսադրույթով վարկերի տրամադրումը՝ փոքր և միջին բիզնեսի զարգացման համար: Մարտի 31-ին հրավիրած ամփոփիչ ասուլիսին դաշինքի

առաջնորդներն ընդգծել են իրենց՝ տնտեսության ազատականացման գաղափարին հավատարիմ լինելը:

Դիտարկման երրորդ փուլում դաշինքի ներկայացուցիչներից միայն Արմեն Մարտիրոսյանը ապրիլի 5-ին «Հայացք» մամուլի ակումբում տեղի ունեցած ասուլիսին հիշատակման տեսքով ընդամենը մեկ անդրադարձ է կատարել թեմային՝ նշելով, որ ընտրություններից հետո տնտեսական դաշտում որևէ բարեփոխում չի լինի:

Սոցիալական ոլորտ: Դիտարկման առաջին փուլում այս թեմաներին դաշինքի բոլոր ներկայացուցիչները միասին իրենց ասուլիսներում հատկացրել են ընդամենը 1 րոպե 39 վայրկյան: Բանախոսների մատնանշած խնդիրները և/կամ առաջարկությունները շատ ընդհանուր բնույթ են կրել և չեն մատնանշել լուծումների ուղիները: Մասնավորապես, փետրվարի 13-ին դաշինքի ցուցակը գլխավորող Մեյրան Օհանյանը հայտարարել է, որ մարդիկ, որոնք ցանկանում են և ի վիճակի են աշխատել, այդպիսի հնարավորություն են ունենալու՝ աշխատատեղերի ստեղծման արդյունքում: Իսկ պատգամավորության թեկնածու Սուսաննա Մուրադյանը մարտի 4-ին կայացած ասուլիսի ընթացքում հայտարարել է դաշինքի՝ պայմանագրային զինծառայողների աշխատավարձը բարձրացնելու առաջարկի մասին: Սակայն ինչի հաշվին՝ չի մանրամասնել:

Ավելի որոշակի են նույն թեկնածուի՝ երիտասարդների համար աշխատանքային բարենպաստ պայմաններ ստեղծելու վերաբերյալ առաջարկությունները: Այսպես, փետրվարի 22-ին տեղի ունեցած ասուլիսին նա նշել է, որ գործատուների հետ պետք է փոխհամաձայնության գալ. նրանք երիտասարդներին աշխատանքի ընդունելիս չեն պահանջում աշխատանքային փորձ ու դրա համար 6 ամիս կամ մեկ տարի ազատվում են սոցիալական հարկերից: Թեկնածուն համոզմունք է հայտնել նաև, որ բյուջեի թափանցիկության պարագայում հնարավոր կլինի կրկնապատկել 4-րդ երեխայի ծննդյան միանվագ նպաստը:

Դիտարկման երկրորդ փուլում դաշինքի ներկայացուցիչները հիմնականում խոսել են նույն թեմաներից, զինծառայողների աշխատավարձի բարձրացման, ծնված երեխաների նպաստների բարձրացման, մայրական կապիտալի հիմնադրամի ստեղծման անհրաժեշտության մասին: Միակ բացառությունը մարտի 29-ին «Բլից ինֆո» ակումբում կայացած ասուլիսն էր, որի բանախոս Սուսաննա Մուրադյանը, վերհիշելով 10 միլիարդ դոլարին հասնող կապիտալի արտահոսքը Հայաստանից, հայտնել է դաշինքի մտադրությունն առ այն, որ այդ գումարները հետ վերադարձվեն և դրանց հաշվին կառուցվեն բնակարաններ Գյումրիի 3000 անօթևան ընտանիքների համար:

Դիտարկման երրորդ փուլում տված երկու հետընտրական ասուլիսներում դաշինքի ներկայացուցիչները սոցիալական խնդիրներին անդրադարձ չեն կատարել:

«Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցություն

Տնտեսական ոլորտ: Դիտարկման առաջին փուլում կուսակցության ներկայացուցիչները երեք ասուլիսներից և ոչ մեկում չեն անդրադարձել երկրի տնտեսական խնդիրներին, բացառությամբ մեկ հիշատակման, երբ ՀՅԴ ընտրական ցուցակում երկրորդ տեղը զբաղեցնող Աղվան Վարդանյանը փետրվարի 15-ին ՀՅԴ

գրասենյակում տեղի ունեցած ասուլիսի ժամանակ հայտարարել է՝ «Այսօր Հայաստանում ստվերային տնտեսության դեմ պայքարի գործընթաց է տեղի ունենում»: Ոչ գնահատականներ, ոչ խնդիրներ, ոչ էլ առաջարկություններ չեն ներկայացվել:

Դիտարկման երկրորդ փուլում, ի տարբերություն առաջինի, տնտեսական հարցեր դաշնակցականներն արծարծել են, չնայած դրանց քիչ ժամանակ են հատկացրել՝ մրցակից ուժերի համեմատ: Բովանդակային առումով էլ շատ հաճախ տնտեսական թեմաներին անդրադարձը եղել է լոգունգային բնույթի: Օրինակ՝ «պետք է զարկ տալ տնտեսությանը» (Արթուր Եղիազարյան, մարտի 8, «Հենարան» ակումբ), «Պետք է ապահովել համապատասխան տնտեսական աճ», «Պետք է ստեղծել պայմաններ տնտեսական աճ ապահովելու համար» (Սմբատ Սախյան, մարտի 15, «Մեդիա կենտրոն»):

Մարտի 9-ին «Մեդիա կենտրոնում» կայացած ասուլիսին մեկ այլ թեկնածու Սուրեն Պարսյանը նշել է, որ ՀՅԴ-ն՝ որպես ընկերավարական կուսակցություն, կողմ է տնտեսական արդյունքների արդար բաժանմանը, և որ հիմա ներդրումներ կան, բիզնես ծրագրեր կան, որոնք փուլ առ փուլ պետք է իրագործվեն: Սակայն ինչ ծրագրեր են և ինչպես պետք է իրագործվեն, չի մանրամասնել: Բանախոսը նաև նշել է, որ ԵԱՏՄ-ն և ԵՄ-ն Հայաստանի համար լավ շուկաներ են, միևնույն ժամանակ Հայաստանը կարող է նպաստել ԵԱՏՄ-Իրան շրջանակներում ազատ առևտրի գոտի ստեղծելու բանակցությունների նախաձեռնմանը:

Կուսակցությունից առավել հանգամանալից տնտեսական թեմաներին անդրադարձել է Բագրատ Եսայանը մարտի 30-ին «Հայացք» ակումբում կայացած ասուլիսին: Նա նշել է, որ Հայաստանում տնտեսությունն ամբողջությամբ բաժանված է խոշոր տնտեսավարողների միջև: Փոքր և միջին տնտեսավարողները հնարավորություն չունեն մեծ ներդրումներ հայթայթելու, իսկ բանկերից տրվող վարկերը վաշխառուական բնույթ ունեն և արդյունավետ չեն կարող լինել: Այս կապակցությամբ դաշնակցության ներկայացուցիչն առաջարկ է հնչեցրել՝ բարեփոխել բանկային համակարգի օրենսդրությունը, որպեսզի այդ համակարգը խթանի տնտեսության զարգացումը և այնպիսի միջավայր ստեղծվի, որ խոշոր տնտեսավարողները հիմնական հարկերը վճարեն, բայց նաև ճանապարհի բացեն փոքրերի ու միջինների համար: Բանախոսը նաև անդրադարձել է հանքարդյունաբերության անարդյունավետության խնդրին՝ նշելով, որ ընդերքը շահագործվում է անխնա, և շահում է միայն խոշոր տնտեսավարողը, իսկ պետական բյուջեն ակնկալվող մուտքեր չի ստանում: Այս խնդիրները լուծելու համար ըստ բանախոսի՝ պետք է տնտեսական հարաբերությունների բնույթը փոխել, սակայն ինչպես՝ կուսակցության ներկայացուցիչը չի մանրամասնել:

Սոցիալական ոլորտ: Դիտարկման առաջին փուլի ասուլիսների ընթացքում ՀՅԴ ներկայացուցիչներն այս ոլորտին չեն անդրադարձել:

Դիտարկման երկրորդ փուլում, թեև քիչ, բայց սոցիալական խնդիրներն արծարծվել են: Այսպես, մարտի 7-ին «Հայելի» ակումբում պատգամավորության թեկնածու Անահիտ Հարությունյանը, հակադարձելով ընդդիմախոսի այն պնդմանը, թե բարձրագույն կրթություն ստանալու համար պետք է սերտիֆիկատ հատկացնել սոցիալապես անապահով ընտանիքներին, նշել է, որ թյուրիմացություն է այն կարծիքը, թե անապահով բոլոր մարդիկ պետք է բարձրագույն կրթություն ստանան:

Մարտի 9-ին «Մեդիա կենտրոնում» կայացած ասուլիսին դաշնակցական Սուրեն Պարսյանը նշել է, որ կուսակցությունը դեմ է պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգին՝ չմատնանշելով, թե ինչ է առաջարկվում դրա փոխարեն:

Նույն կենտրոնում մեկ այլ թեկնածու՝ Սմբատ Սախյանը մարտի 15-ին անդրադառնալով աշխատավարձերի խնդրին՝ նշել է, որ նվազագույն աշխատավարձը պարբերաբար պետք է բարձրացվի՝ հիմք ընդունելով կենսաապահովման նվազագույն բյուջեն, իսկ պետական ծառայողների աշխատավարձը պետք է ապահովի բարեկեցիկ կենսամակարդակ: Անդրադառնալով առողջապահությանը՝ բանախոսը կողմ է արտահայտվել պարտադիր ապահովագրական համակարգի ներդրմանը, ընդ որում՝ նշելով, որ անապահով խավերի համար այդ վճարումները պետք է կատարի պետությունը:

Դաշնակցականների ասուլիսներին նկատելի էր, որ նրանք հաճախ իրենց անհամաձայնությունն էին արտահայտում որոշ մրցակից քաղաքական ուժերի՝ սոցիալական ոլորտին վերաբերող առաջարկությունների առումով:

Մասնավորապես, մարտի 30-ին «Հայացք» ակումբում կայացած ասուլիսին Բագրատ Եսայանն անիրատեսական է համարել ԽՍՀՄ Խնայքանկում քաղաքացիների ավանդների ամբողջական վերադարձը, ինչպես նաև կենսաթոշակների՝ 25 հազար դրամով բարձրացումը:

Դիտարկման երրորդ փուլում կուսակցության ներկայացուցիչները ոչ մի ասուլիս չեն տվել:

ԱՍՈՒԼԻՄՆԵՐԻՆ ԱՐԾԱՐԾՎԱԾ ԱՅԼ ԹԵՄԱՆԵՐ

Տնտեսական ու սոցիալական խնդիրներից զատ դիտարկման ընթացքում արձանագրվել են նաև բոլոր այն թեմաները, որոնց անդրադարձել են բանախոսները: Սակայն համաձայն մեթոդաբանության՝ դրանց հատկացված ժամանակը չի հաշվարկվել՝ տվյալ հետազոտության համար երկրորդական լինելու հիմնավորմամբ: Ստորև նույն հերթականությամբ ներկայացնում ենք, թե ինչ թեմաների մասին են խոսել խորհրդարանական ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի ներկայացուցիչները դիտարկման առաջին և երկրորդ փուլի ասուլիսներին:

«ԵԼՔ» կուսակցությունների դաշինքի արձարծած այլ խնդիրները.

Առաջին փուլ

- «ԵԼՔ» դաշինքի ցուցակի ձևավորումը, նախընտրական քաղաքական վերադասավորումներ,
- Նախընտրական ընդդիմադիր դաշտի ձևավորումը և դրանում նախկին իշխանականների մասնակցությունը,
- Դաշինքի նպատակները,
- Երկրում քաղաքանտարկյալներ չունենալու երաշխիքներ ստեղծելու անհրաժեշտություն,

- Բանակցությունների միջոցով միասնական իշխանություն ձևավորելու հնարավորությունները,
- Ընտրակաշառքն ու ձայնավաճառությունը և դրանց դեմ պայքարը,
- Բնապահպանական խնդիրները Հայաստանում,
- Ղարաբաղյան խնդիրը և դրա ապագան,
- Էներգետիկ խնդիրներ,
- Իրավիճակը ռազմական առաջնագծում և դրա հետ կապված կազմակերպչական խնդիրները,
- Երկրի անվտանգության համակարգի ապահովում, բանակի ամրապնդում,
- Իշխանափոխության հնարավորությունները և քաղաքական ուժերի համատեղ գործողություններով արտաքին քաղաքականության օրակարգի ձևավորում,
- Ընտրություններ՝ նոր ընտրական օրենսգրքի բարդ պայմաններում,
- Ազատ և արդար ընտրություններ անցկացնելու հնարավորությունը և արդյունավետ հանրային վերահսկողություն ապահովելու անհրաժեշտությունը,
- Ինստիտուցիոնալ ընդդիմության ձևավորման խնդիրները,
- «ԵԼՔ»-ի՝ կոալիցիաներ ձևավորելու հնարավորությունները, և դրանցում հանրապետականների բացառումը,
- «Մարտի 1-ի» գործն ու մարդու իրավունքների պաշտպանությունը,
- Ընտրազանգվածի տեղեկացված չլինելու խնդիրները,
- Քարոզարշավի ռազմավարություն, համախոհների ավելացում,
- Արտագաղթի և հայրենդարձության խնդիրները,
- Սփյուռքի մասնակցությունը Հայաստանի քաղաքական կյանքում,
- Վառելիքի ներմուծման մաքսային խնդիրները,
- Անկախ դատական համակարգի ձևավորման անհրաժեշտություն,
- Որակյալ բարձրագույն կրթության հասանելիություն,
- Կանանց ներգրավվածությունը քաղաքականության մեջ,
- Քաղաքական բանավեճի մշակույթի և քաղաքակիրթ ընտրությունների ավանդույթի բացակայությունը:

Երկրորդ փուլում վերոհիշյալից գատ, արծարծվել են նաև հետևյալ թեմաները.

- Կրթական ոլորտի բարեփոխումների անհրաժեշտություն,
- Նախընտրական արշավի կազմակերպման առանձնահատկություններ և խոչընդոտումներ,
- Կոռուպցիան՝ որպես ազգային անվտանգության սպառնալիք, հակակոռուպցիոն անկախ մարմնի ստեղծման անհրաժեշտություն,
- Հասարակության հավատի բացակայությունը ընտրական ինստիտուտի նկատմամբ,
- «Ելք» դաշինքի առաքելությունը և հեռանկարները,
- ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունների զարգացման անհրաժեշտություն,
- «Հաց բերողի» (Արթուր Սարգսյան) մահվան հետ կապված հանգամանքները և քաղաքական արձագանքները,
- Արտաքին քաղաքականությունը՝ քարոզարշավի ընթացքում,

- Սամվել Բաբայանի ձերբակալությունն ու դրա հետ կապված քաղաքական գործընթացներ,
- Դպրոցների ուսուցիչների ներգրավվածությունը ՀՀԿ թեկնածուների համար ձայներ ապահովելու գործընթացում,
- Վերաբերմունքը սոցիոլոգիական հարցումներին ու սոցիոլոգիական կազմակերպություններին:

Դիտարկման **երրորդ փուլում** արձանագրված միակ հետընտրական ասուլիսին «Ելք» դաշինքի ներկայացուցիչները հանդես են եկել հայտարարությամբ, որտեղ նշել են, որ թե քարոզարշավի ընթացքում, թե ընտրության օրը քաղաքացիների ընտրական կամքը ենթարկվել է վարչական ու ֆինանսական ապօրինի ճնշումների: Նրանք ընդգծել են նաև, որ ընտրությունները վիճարկելու համար բացակայում են խախտումներն ու չարաշահումները ապացուցող փաստերը:

«Ազատ դեմոկրատներ» կուսակցության արձարձած այլ խնդիրները.

Առաջին փուլ

- Նախընտրական քաղաքական վերադասավորումներ,
- Կուսակցության նախընտրական ցուցակի ձևավորում,
- Կրթության ոլորտում փոփոխությունների անհրաժեշտություն,
- Հանքերի շահագործումն ու էկոլոգիական խնդիրները,
- Հաշմանդամություն ստացած զինծառայողների բուժօգնության ապահովում,
- Քաղաքական մրցակցություն, նախընտրական հռետորաբանություն և էթիկա,
- Նախընտրական դաշինքների ձևավորումը՝ ընդդիմադիրներից և նախկին իշխանականներից,
- Միասնական ընդդիմություն չունենալու պատճառները,
- Գաղափարական պայքարի բացակայությունը, մեծահարուստների տեղաբաշխումը ընդդիմության և իշխանության մեջ,
- Երիտասարդության ներգրավվածությունը ընտրական ցուցակներում,
- Ղարաբաղյան հիմնահարցի լուծում՝ փաթեթային տարբերակով,
- Լեռնային Ղարաբաղի ներգրավման խնդիրը բանակցություններում,
- Քաղաքակիրթ քարոզարշավի մշակույթի տարածում,
- Ազատականությունը՝ որպես կուսակցության հիմնական գաղափարախոսություն,
- Իրավիճակը ռազմական առաջնագծում և դրա հետ կապված պաշտպանության կազմակերպումը,
- Բանակի վերակառուցումը և անցումը վճարովի զինծառայության,
- Ընտրակաշառքների և այլ խախտումների դեմ պայքարի հնարավորությունները,
- Ընտրություններ՝ նոր Ընտրական օրենսգրքի թելադրած խաղի նոր կանոններով,
- Քաղաքական մրցակցություն,

- Իշխանությունների՝ ազատ ընտրություններ անցկացնելու կամքի բացակայություն և աղքատ ընտրողին կաշառելը,
- Ընտրություններ. քաղաքական մրցակցություն՝ և, թե՛ ռեսուրսների պայքար,
- Հայաստանի անվտանգության համակարգ. ոչ թե ՀԱՊԿ, այլ ՆԱՏՕ:

Երկրորդ փուլում վերոհիշյալից գատ, արծարծվել են նաև հետևյալ թեմաները.

- Հայ-ռուսական հարաբերությունների էությունը,
- Նախընտրական արշավի կազմակերպման առանձնահատկություններ և խոչընդոտումներ,
- «Ազատ դեմոկրատների» և այլ ուժերի ծրագրերի համեմատական վերլուծություն,
- Կանանց ներգրավվածությունը քաղաքականության մեջ,
- Ընտրական օրենսդրության խախտումները քարոզարշավի ընթացքում,
- Պաշտպանության ոլորտի քաղաքականության վերանայման անհրաժեշտությունը,
- Ապրիլյան պատերազմի առնչությամբ ներքին և արտաքին հետաքննությունների անհրաժեշտությունը,
- «Հաց բերողի» (Արթուր Սարգսյան) մահվան հետ կապված հանգամանքները և քաղաքական արձագանքները,
- Քարոզարշավի լուսաբանումը ՋԼՄ-ներում,
- Սամվել Բաբայանի ձերբակալությունն ու դրա հետ կապված քաղաքական գործընթացներ,
- Վարչական ռեսուրսի օգտագործումը քարոզարշավի ընթացքում,
- Ներգաղթած սիրիահայերի խնդիրները,
- Դպրոցների ուսուցիչների ներգրավվածությունը ՀՀԿ թեկնածուների համար ձայներ ապահովելու գործընթացում,
- Վերաբերմունքը սոցիոլոգիական հարցումներին ու սոցիոլոգիական կազմակերպություններին:

Երրորդ փուլի ասուլիսների ընթացքում կուսակցության ներկայացուցիչները խիստ քննադատության են ենթարկել տեղի ունեցած ընտրությունները, մատնանշելով իրենց պարտության պատճառները, մասնավորապես, ընդդեմ իրենց սև փիարը, սոցիոլոգիական հարցումների տվյալներով մանիպուլյացիաները, իշխող ուժերի կողմից ընտրողներին փող բաժանելու գործոնը, քվեարկությունը ուղղորդելն ու վերահսկելը: Բանախոսները նաև անդրադարձել են քաղաքական շրջանակներում և հասարակությունում շրջանառվող լուրերին՝ համաձայն որոնց «Ելք» դաշինքին հովանավորում է ՀՀ նախագահի փեսան՝ Միքայել Մինասյանը (Վատիկանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան), ինչպես նաև այս առնչությամբ նրա արձագանքին: Ընդգծվել է հասարակության մեջ վախի մթնոլորտի առկայությունը: Որպես ընտրությունների արդյունք՝ արձանագրվել է, որ ձևավորվող խորհրդարանն իր որակով ավելի վատն է, քան նախորդը:

«Հայկական վերածնունդ» կուսակցության արձարձած այլ խնդիրները.

Առաջին փուլ

- Ներկուսակցական աշխատանք և նախընտրական ցուցակի ձևավորում,
- Քաղաքական վերադասավորումներ և մրցակցություն,
- Կուսակցության պլատֆորմի սոցիալական ուղղվածություն,
- Ընտրություններից հետո հնարավոր կոալիցիայի ձևավորում,
- Ռազմական առաջնագծի վիճակը և դրա հետ կապված պաշտպանության կազմակերպումը, պրոֆեսիոնալներով համալրումը,
- Բանակում վճարովի ծառայության անցնելու անհրաժեշտությունը,
- Ղարաբաղի հիմնահարց, փաթեթային տարբերակ,
- Գաղափարական պայքարի բացակայություն, փողի մրցավազք,
- Ընտրազանգվածի ակտիվությունը խթանելու անհրաժեշտություն,
- Ընտրակաշառքը և դրա պատճառները,
- Արտագաղթը՝ որպես լուրջ մարտահրավեր և կանխարգելման հնարավորություններ,
- Նախորդ խորհրդարանի արատավոր կազմն ու գործունեությունը,
- Քաղաքական համակարգի կայացումը՝ որպես հրատապ խնդիր,
- Հետընտրական հնարավոր դաշինքները,
- Նոր Ընտրական օրենսգրքի թերությունները,
- Երկրի անվտանգության ապահովմանն ուղղված ծրագրի անհրաժեշտությունը,
- Կուսակցության լիդերի գործոնը ընտրություններում,
- Ընդդիմադիր ուժերի հնարավոր համագործակցությունը,
- Իշխանության մենաշնորհը վերացնելու անհրաժեշտությունը,
- Նախընտրական ծրագրերի նշանակությունն ընտրություններում,
- Հարաբերություններն ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի միջև,
- Մշակույթի խնդիրները՝ նախընտրական ծրագրում,
- Խոշոր բիզնեսի ներկայացուցիչները ԱԺ-ում,
- Օրենսդրական բարեփոխումներ՝ ուղղված ոչ թե բիզնեսի, այլ հասարակության շահերին,
- ՀԿ-ների ներգրավվածությունը ընտրական գործընթացներում:

Երկրորդ փուլում վերոհիշյալից գատ, արձարձվել են նաև հետևյալ թեմաները.

- Քարոզարշավի ընդհանուր գնահատական,
- Կրթական ոլորտի բարեփոխումների անհրաժեշտությունը,
- Պայմանագրային զինծառայությանն անցնելու հնարավորությունները,
- Ընտանեկան բռնությունների խնդիրը Հայաստանում,
- Ընտրարշավի լուսաբանումը ՋԼՄ-ներում,
- «Հաց բերողի» (Արթուր Սարգսյան) մահվան հետ կապված հանգամանքները և քաղաքական արձագանքները,

- Վերաբերմունքը սոցիոլոգիական հարցումներին ու սոցիոլոգիական կազմակերպություններին:
- Կնոջ մասնակցությունն ընտրություններին,
- Թեկնածուների լիազորությունների իրականացման խոչընդոտումներ,
- Դպրոցների ուսուցիչների ներգրավվածությունը ՀՀԿ թեկնածուների համար ձայներ ապահովելու գործընթացում:

Երրորդ՝ հետընտրական փուլում, կուսակցությունն ասուլիս չի տվել:

«Ծառուկյան» կուսակցությունների դաշինքի արծարծած այլ խնդիրները.

Առաջին փուլ

- Քաղաքական լիդերների գործունը՝ ընտրություններում,
- Քաղաքական վերադասավորումներ և դաշինքի նախընտրական ցուցակի ձևավորում,
- Դաշինքի շանսերը ընտրություններում և ներկայացված ծրագիրը,
- Քաղաքական մրցակցության անհրաժեշտությունը,
- Ընտրակաշառքը՝ նախընտրական գործընթացում,
- Նախընտրական պայքարն ու իշխանափոխության հնարավորությունը,
- Արտագաղթն ու դրա հաղթահարման միջոցները,
- Դաշինքի ծրագրի 15 կետերը՝ ուղղված երկրում իրավիճակի փոփոխությանը:

Երկրորդ փուլում վերոհիշյալից գատ, արծարծվել են նաև հետևյալ թեմաները.

- ՀՀԿ-ԲՀԿ աջակիցների բախումները և դրանց քաղաքական գնահատականները,
- Քարոզարշավի ընդհանուր գնահատական,
- Պետական կառավարման արդյունավետության բարձրացման խնդիրները,
- Օրենքի գերակայության կարևորությունը,
- Ընտրական օրենսգրքի թերությունների բացահայտումը,
- Ծառուկյանի գործունը քաղաքական պայքարում,
- «Հաց բերողի» (Արթուր Սարգսյան) մահվան հետ կապված հանգամանքները և քաղաքական արձագանքները,
- Սամվել Բաբայանի ձերբակալությունն ու դրա հետ կապված քաղաքական գործընթացներ,
- ԿԸՀ-ի վարքագիծը՝ քարոզարշավի ընթացքում,
- Արցախի հարցի կարգավորումը և Լևոն Տեր-Պետրոսյանի առաջարկությունների անընդունելիությունը,
- Ընտրություններն ու հնարավոր կոալիցիաները,
- Վերաբերմունքը սոցիոլոգիական հարցումներին ու սոցիոլոգիական կազմակերպություններին,
- Դպրոցների ուսուցիչների ներգրավվածությունը ՀՀԿ թեկնածուների համար ձայներ ապահովելու գործընթացում:

Երրորդ՝ հետընտրական փուլում, դաշինքն ասուլիս չի տվել:

«Կոնգրես-ՀՄԿ» կուսակցությունների դաշինքի արձարձած այլ խնդիրները.

Առաջին փուլ

- Դաշինքի ձևավորում և ընտրական ցուցակի ներկայացում,
- Հնարավոր քաղաքական համագործակցություն հետընտրական շրջանում,
- Քաղաքական վերադասավորումներ,
- Ընտրակաշառքն ընտրական գործընթացում,
- Բանակի մասնակցությունը քաղաքական գործընթացներին,
- Ընտրական գործընթացի և ՀԱԿ-ի քայլերի նկարագրություն,
- Ղարաբաղի հիմնախնդրին ուղղված ծրագիր՝ միջազգային խաղաղության պայմանագրի միջոցով,
- ՀԱԿ-ի և ՀՀԿ-ի խաղաղության հաստատման վերաբերյալ ծրագրերի տարբերությունը,
- Արտագաղթն ու դրա կանխարգելման անհրաժեշտությունը,
- Բանակում տիրող իրավիճակը,
- Իշխանության և ժողովրդի վստահության խնդիրները,
- Իշխող կուսակցության համալրումը ստիպողական մեթոդներով,
- Ընտրությունների վերահսկման և խախտումների նվազեցման հնարավորություն,
- Լայն ընդդիմադիր դաշինք չկազմելու պատճառներ,
- «Սարտի 1-ի» գործը և գոհերի հարազատներին օժանդակություն տրամադրելը,
- Քաղբանտարկյալները և մարդու իրավունքները,
- Քաղաքական կոնսենսուս՝ ընտրական գործընթացի վերահսկման մեխանիզմների, բայց ոչ Ընտրական օրենսգրքի շուրջ,
- Կոռուպցիայի դեմ պայքար,
- Հետընտրական կանխատեսումներ,
- ՀԱԿ-ի ընտրազանգվածը,
- Բաց սահմանների առավելությունը,
- Մտավորականությունը՝ դաշինքի ցուցակում,
- Ընդդիմադիրների հնարավոր համագործակցությունը՝ ուղղված ընտրական գործընթացը վերահսկելուն:

Երկրորդ փուլում վերոհիշյալից գատ, արձարձվել են նաև հետևյալ թեմաները.

- Նախընտրական բռնություններ և ճնշումներ,
- Ընտրական օրենսգրքի թերությունների բացահայտում,
- Կնոջ դերը քաղաքականության մեջ և մասնակցությունն ընտրություններում,
- Արտագաղթից բխող դեմոգրաֆիական խնդիրները,
- Ընտրություններ և հնարավոր կոալիցիաներ,
- «Հաց բերողի» (Արթուր Սարգսյան) մահվան հետ կապված հանգամանքները և քաղաքական արձագանքները,
- Հայաստան-Ռուսաստան հարաբերությունների ներկա վիճակն ու զարգացման հնարավորությունները,

- Ընտրագանգվածի որակն ու դիրքորոշումները,
- Նախընտրական բախումներն ու ծեծկռտուքը մրցող քաղաքական ուժերի միջև,
- Բնապահպանական խնդիրները նախընտրական ծրագրում,
- Քարոզարշավի ընդհանուր գնահատականներ և տպավորություններ,
- Վերաբերմունքը սոցիոլոգիական հարցումներին ու սոցիոլոգիական կազմակերպություններին:

Երրորդ՝ հետընտրական փուլում, դաշինքն ասուլիս չի տվել:

Հայաստանի հանրապետական կուսակցության արձարձած այլ խնդիրները.

Առաջին փուլ

- Քաղաքական վերադասավորումներ,
- Կուսակցության ընտրական ցուցակի ձևավորում, ներկուսակցական աշխատանք,
- Դաշինքներ, դեմքեր, այլ ոչ թե գաղափարներ,
- Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի անվտանգության ապահովումը՝ որպես առաջնային խնդիր և նախընտրական կարգախոս,
- 2017-ի ընտրությունների նշանակությունը,
- Լապշինի արտահանձնման հետ կապված Հայաստան-Բելառուս հարաբերությունների վերանայման անհրաժեշտություն,
- ԱԺ վերջին նստաշրջանի ամփոփում,
- Ընտրությունների կազմակերպման ու քաղաքական մրցակցության հարցերը,
- Խորհրդարանական ընտրությունները և հասարակության վստահության բարձրացման սպասելիքներ,
- Քաղաքական դաշտի ամայնալու պատճառները,
- Ընտրությունների վերահսկողության տեխնիկական նորամուծությունները և դրանց հետ կապված ակնկալիքները,
- Երիտասարդությունը՝ ՀՀԿ ընտրական ցուցակում,
- Ապագա խորհրդարանի քաղաքական կազմ. կանխատեսումներ,
- Ճամբարափոխություն՝ առանց գաղափարական հենքի, հնարավոր մրցակիցներ,
- Իշխանության կողմից իրականացվող քաղաքականության նկարագրություն և հիմնավորումներ,
- Ընտրողների կողմնորոշվելու խնդիրները նոր քաղաքական միավորումների և դեմքերի առկայության պարագայում,
- Ռեյտինգային քվեարկության առանձնահատկությունները,
- Ընդդիմության լիազորությունները նոր խորհրդարանում,
- Դաշինքների կայունության խնդիրը,
- Իշխանությունների՝ որպես ընտրությունների կազմակերպչի պատասխանատվությունը,
- Հանգանակության, բարեգործության և ընտրակաշառքի տարանջատման բարդությունները,

- Ընտրապայքարի առանձնահատկությունների վերլուծություն,
- Գյուղական բնակավայրերի դատարկվելու խնդիրը,
- Ռազմական իրավիճակը՝ հայ-ադրբեջանական շփման գծում,
- ՀՀ նախագահի այցելությունը Բրյուսել, և Հայաստան-ԵՄ բանակցությունները շրջանակային համաձայնագրի շուրջ,
- Ընտրակաշառքի քրեականացումը:

Երկրորդ փուլում վերոհիշյալից գատ, արժարծվել են նաև հետևյալ թեմաները.

- Տարբեր ոլորտների սեփական քաղաքականության հիմնավորումներ,
- Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորումը,
- Ներկուսակցական վերադասավորումների գործընթացը,
- ՀՀԿ-ԲՀԿ բախումները նախընտրական շրջանում,
- «Հաց բերողի» (Արթուր Սարգսյան) մահը և քաղաքական արձագանքները,
- Բարեգործությունն ու ընտրակաշառքը՝ որպես նախընտրական գործոն,
- Ընտրական գվածի որակն ու դիրքորոշումները,
- Հայի ինքնության, ընտանիքի, հայոց լեզվի կարևորությունը՝ նախընտրական ծրագրում,
- Արտաքին քաղաքականության առանձնահատկությունները,
- Սամվել Բաբայանի ձերբակալությունն ու դրա հետ կապված քաղաքական գործընթացներ,
- Կրթության ոլորտի խնդիրները նախընտրական ծրագրերում,
- Վերաբերմունքը սոցիոլոգիական հարցումներին ու սոցիոլոգիական կազմակերպություններին,
- Դպրոցների ուսուցիչների ներգրավվածությունը ՀՀԿ թեկնածուների համար ձայներ ապահովելու գործընթացում. հիմնավորումներ և հակափաստարկներ ընդդիմադիր ուժերին,
- Ընդդիմադիր ուժերի քննադատություն:

Երրորդ՝ հետընտրական փուլի ասուլիսների ընթացքում, կուսակցության ներկայացուցիչներն արժարծել են հետևյալ հարցերը.

- Նոր ընտրական օրենսգրքով անցկացված ընտրությունների ամփոփ գնահատականներ. ըստ ՀՀԿ-ի՝ արձանագրվել է մեծ քայլ առաջ, ընտրողների աննախադեպ մասնակցություն, բացառվել է քվեարկության վերահսկումը, որն է քաղաքական ուժ արդյունքները չի բողոքարկել, այս խորհրդարանը որակական կազմով ու ինտելեկտուալ առումով շատ ավելի լավն է,
- Ընտրակաշառքը պախարակելի է համարվել, ռեյտինգային կարգով ընտրությունների թերություններից դասեր քաղելու անհրաժեշտությունը,
- Ազգային փոքրամասնությունների ներկայացվածությունը խորհրդարանում:

Կոմունիստական կուսակցության արձարձած այլ խնդիրները.

Առաջին փուլ

- Կուսակցության նախընտրական ցուցակի ձևավորում,
- Կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության խնդիրները,
- Ազգերի ինքնորոշման սկզբունքը՝ կոմունիստների համար գերակա ուղղություն,
- Ստալինիզմը՝ որպես դաժան ժամանակաշրջան,
- Մշակույթների երկխոսության անհրաժեշտությունը,
- Կոմունիստների վերադարձը՝ որպես հանրային պահանջ,
- Արտագաղթի կանխարգելման անհրաժեշտությունը,
- Հետխորհրդային անարդարությունները՝ կոմունիստների նկատմամբ,
- Կոմունիստական գաղափարախոսության անհրաժեշտությունը նոր խորհրդարանում,
- Դաշինքները կազմվում են առանց գաղափարական հենքի,
- Կրթության մատչելիությունը շարքային քաղաքացու համար,
- ԵԱՏՄ-ն՝ որպես երկրի անվտանգության երաշխիք:

Երկրորդ փուլում վերոհիշյալից գատ, արձարձվել են նաև հետևյալ թեմաները.

- Ապագա խորհրդարանի կառուցվածքը. կանխատեսումներ,
- Ռուսաստանի հետ ռազմավարական գործընկերության ամրապնդման հնարավորություններ,
- Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգավորում,
- Կրթության խնդիրները նախընտրական ծրագրում,
- Դեմոգրաֆիական ճգնաժամը հեռավոր գյուղերում,
- Դատական համակարգի բարեփոխումներ,
- ՏԻՄ-երի գործունեությունը,
- «Հաց բերողի» (Արթուր Սարգսյան) մահը և քաղաքական արձագանքները,
- Վերաբերմունքը սոցիոլոգիական հարցումներին,
- Ադմինիստրատիվ ռեսուրսի կիրառումը նախընտրական շրջանում,
- Քարոզարշավի լուսաբանումը ԶԼՄ-ներում:

Երրորդ՝ հետընտրական փուլի միակ ասուլիսին բանախոսը այլ խնդիրներին անդրադարձ չի կատարել:

«Օհանյան-Ըաֆֆի-Օսկանյան» կուսակցությունների դաշինքի արձարձած այլ խնդիրները.

Առաջին փուլ

- Միասնական դաշինքի ձևավորումը, դրա նպատակը, խնդիրներն ու գաղափարները,

- Նախընտրական քաղաքական վերադասավորումներ,
- Նախորդ ընտրությունների կեղծում,
- Անկախ դատական համակարգի ձևավորման անհրաժեշտություն,
- Իշխանությունների գործունեության վերլուծություն,
- Բանակի մարտունակությունը բարձրացնելու, պայմանագրային ծառայությունը խթանելու և անվտանգության համակարգի ապահովման խնդիրները,
- Երկրում տիրող իրավիճակը փոխելու անհրաժեշտությունը,
- Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի անվտանգության ապահովման երաշխիքները,
- Լեռնային Ղարաբաղի խնդրի հնարավոր լուծումը,
- Իշխանությունների հետ չհամագործակցելու պատճառներն ու հիմնավորումները,
- Քաղբանտարկյալներին ազատ արձակելու անհրաժեշտությունը և ապագայում նրանց բացառումը երկրում,
- Բանակի մասնակցությունը քվեարկության գործընթացում,
- Քաղհասարակության հետ համագործակցության կարևորությունը,
- Նոր Ընտրական օրենսգրքի բարդություններն ու առավելությունները,
- ՕԲՕ դաշինքի մրցակիցներն ու կռալիցիա կազմելու հնարավորությունները,
- Հայաստանից դուրս գտնվողների համար առանձին ցուցակ կազմելու անհրաժեշտություն,
- Ընտրակաշառքի գործոնը՝ ընտրություններում,
- Անվտանգության տեսանկյունից Հայաստանի հարաբերությունները ԵԱՏՄ-ի և ԵՄ-ի, ՀԱՊԿ-ի և ՆԱՏՕ-ի հետ, ինչպես նաև առանձին՝ Չինաստանի, Հնդկաստանի և Ռուսաստանի հետ,
- Երկրի բրգաձև քաղաքական համակարգը արմատապես փոխելու հիմնավորումները,
- Արտագաղթի կանխարգելում,
- Էկոլոգիական խնդիրների լուծում,
- Ընդդիմադիր ուժերի միմյանց հետ մրցակցությունն ու իշխանության դեմ պայքարը:

Երկրորդ փուլում վերոհիշյալից գատ, արծարծվել են նաև հետևյալ թեմաները.

- Նախընտրական բռնություններ և ճնշումներ,
- Օսկանյանի որդու ձերբակալությունն ու քաղաքական գնահատականները,
- Կնոջ դերը քաղաքականությունում և մասնակցությունն ընտրություններում,
- Սահմանադրության և Ընտրական օրենսգրքի փոփոխությունների անհրաժեշտությունը,
- Արտաքին քաղաքականությունը նախընտրական ծրագրում, դեսպանների կազմի վերանայում,
- Քաղաքական բանավեճերի խնդիրը նախընտրական պայքարում,
- Դպրոցների ուսուցիչների ներգրավվածությունը ՀՀԿ թեկնածուների համար ձայներ ապահովելու գործընթացում. հիմնավորումներ և հակափաստարկներ ընդդիմադիր ուժերին,

- Սամվել Բաբայանի ձեռքարկությունն ու դրա հետ կապված քաղաքական գործընթացներ,
- Վերաբերմունքը սոցիոլոգիական հարցումներին ու սոցիոլոգիական կազմակերպություններին,
- Խոչընդոտումներ քարոզարշավի ժամանակ,
- Ընտրազանգվածի իրազեկվածության մակարդակը:

Երրորդ՝ հետընտրական փուլի ասուլիսներին դաշինքի ներկայացուցիչներն անդրադարձել են իշխանությունների, այդ թվում խորհրդարանի ոչ լեգիտիմությանը, և որպես հետևանք՝ երկրի առջև ծառայած խնդիրներին արդյունավետ լուծումներ գտնելու անկարողությանը: Նախընտրական գործընթացներին և ընտրություններին տրվել են հետևյալ բացասական գնահատականները՝

- քաղաքական ընտրությունների փոխարեն տեղի է ունեցել ձայների հրապարակային աճուրդ,
- ընտրողների մասնակիցների թիվն ուժնազրկված է, իշխող կուսակցությանն են գնացել նաև մահացածների ու արտերկրում գտնվողների «ձայները»,
- քվեարկությունն ուղղորդվել է իշխանությունների սպասավորների կողմից,
- նոր խորհրդարանը ձևավորվել է երեք անձի կողմից՝ Սերժ Սարգսյան, Գագիկ Ծառուկյան, Միքայել Մինասյան,
- ընդդիմությունը չկարողացավ միավորվել, նաև՝ ընտրություններից հետո:

«Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցության արձարձած այլ խնդիրները.

Առաջին փուլ

- Նախընտրական ցուցակի ձևավորում, ներկուսակցական աշխատանք,
- Հայ Դատի գրասենյակների ծրագրերը 2017-ին,
- Ղարաբաղա-ադրբեջանական սահմանում տիրող իրավիճակի վերլուծություն,
- Քաղաքական զարգացումները Հարավկովկասյան տարածաշրջանում,
- Ընտրությունների միջոցով ձևավորված նոր իշխանությունը և դրա հետ կապված ակնկալիքները,
- Իշխանության որակական փոփոխության անհրաժեշտությունը և համակարգային արատների հաղթահարման խնդիրները,
- ՀՀԿ-ի հետ իրական կոալիցիայի ձևավորման հնարավորությունը,
- Նոր ընտրական համակարգը և կեղծիքների բացառումը,
- Դաշնակցության ներդրումը նոր ընտրական համակարգի ձևավորման գործում,
- Բնակչության աղքատության և ընտրակաշառքի գործոնները ընտրություններում,
- Ազատ և արդար ընտրություններ անցկացնելու նախապայմանները:

Երկրորդ փուլում վերոհիշյալից գատ, արձարձվել են նաև հետևյալ թեմաները.

- Քարոզարշավի ընթացքում օրենքի խախտումներ,

- Կրթական խնդիրները նախընտրական ծրագրում,
- ԲՀԿ-ՀՀԿ, ՀՅԴ-ՀՀԿ ուժերի ներկայացուցիչների միջև բռնություններ և քաղաքական գնահատականներ,
- Կոռուպցիայի դեմ պայքար,
- Բանակի մարտունակության ապահովում,
- Ղարաբաղի խնդրի խաղաղ կարգավորում և ԼՂՀ-ի ներգրավում բանակցային գործընթացում,
- Ժողովրդագրական խնդիրներն ու հայրենադարձությունը,
- Սամվել Բաբայանի ձերբակալությունն ու դրա հետ կապված քաղաքական գործընթացներ,
- Դպրոցների ուսուցիչների ներգրավվածությունը ՀՀԿ թեկնածուների համար ձայներ ապահովելու գործընթացում. հիմնավորումներ և հակափաստարկներ ընդդիմադիր ուժերին,
- Ընտրապայքարի գաղափարական ասպեկտը,
- Ռեյտինգային ընտրակարգի թերությունները և դրանից հրաժարվելու անհրաժեշտությունը,
- Վերաբերմունքը սոցիոլոգիական հարցումներին ու սոցիոլոգիական կազմակերպություններին,
- Քննադատությունը Լևոն Տեր-Պետրոսյանի առաջարկությունների վերաբերյալ:

Երրորդ՝ հետընտրական փուլում կուսակցությունը ոչ մի ասուլիս չի տվել:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ղիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ 2017 թվականի ապրիլի 2-ի խորհրդարանական ընտրությունների պաշտոնական քարոզարշավին նախորդող ժամանակահատվածում արդեն քաղաքական ուժերը, ընդհանուր առմամբ, բավական ակտիվ են օգտագործել մամուլի ասուլիսները՝ որպես ընտրողներին իրենց գաղափարներն ու մոտեցումները ներկայացնելու միջոց: Փետրվարի 6-ից մարտի 4-ը մայրաքաղաքի տարբեր մամուլի սրահներում տեղի է ունեցել ընտրությունների թեմայով 63 ասուլիս, որոնցից 31-ին մասնակցել են 2 և ավելի քաղաքական գործիչ, այսպիսով՝ բանախոսների թիվը կազմել է 114:

Բուն քարոզարշավի 27 օրերին՝ Ղիտարկման երկրորդ փուլում, քաղաքական ուժերի ակտիվությունն այս առումով էլ ավելի բարձր է եղել: Արձանագրվել է նախընտրական 110 մամուլի ասուլիս, որոնց մասնակցել է 201 քաղաքական գործիչ: Ինչ վերաբերում է հետընտրական փուլին, ապա այդ շրջանում քաղաքական ուժերի ակտիվությունը կտրուկ նվազեց. կայացավ ընդհամենը 9 ասուլիս, որոնց մասնակցեցին 15 գործիչներ: Ընդհանուր առմամբ՝ Ղիտարկման երեք փուլերի ընթացքում տեղի է ունեցել 182 ասուլիս, որոնցում ելույթ են ունեցել կուսակցությունների և դաշինքների 330 ներկայացուցիչներ:

Մամուլի ասուլիսներին մասնակցելու քանակի առումով Ղիտարկման առաջին փուլում ընտրապայքարի մեջ մտած ուժերից ամենակատիվը Հանրապետական կուսակցությունն էր: ՀՀԿ-ին հաջորդում էին «ԵԼՔ» դաշինքը, «Ազատ դեմոկրատներ»

ու «Հայկական վերածնունդ» կուսակցությունները: Ամենապասիվը Հայ Հեղափոխական Դաշնակցությունն ու Հայաստանի Կոմունիստական կուսակցությունն էին:

Պաշտոնական քարոզարշավի ընթացքում պատկերը էապես փոխվեց: Նախ՝ «Ելք» դաշինքն ու «Ազատ դեմոկրատներ» կուսակցությունն ասուլիսներին իրենց մասնակցության քանակով շրջանցեցին իշխող ՀՀԿ-ին: Բացի դա, ընտրապայքարի մեջ մտած գրեթե բոլոր քաղաքական ուժերը, բացառությամբ «Օհանյան-Բաֆֆի-Օսկանյան» դաշինքի, այս փուլում շեշտակի ավելացրել են իրենց մասնակցությունը մամուլի ասուլիսներին: Այսպես, «Ելք»-ի և «Ազատ դեմոկրատներ»-ի ցուցանիշները աճել են 2 և ավելի անգամ: Գրեթե նույնքան ավելացել է «Հայկական վերածնունդ» կուսակցության և «Կոնգրես-ՀԺԿ» դաշինքի մասնակցությունը: Իսկ առաջին փուլի ամենապասիվ երեք ուժերի՝ «Ծառուկյան» դաշինքի, ՀՅԴ-ի և Կոմունիստական կուսակցության ցուցանիշները աճեցին համապատասխանաբար՝ ավելի քան 3, 5 և 10 անգամ:

Ընտրություններից հետո քաղաքական ուժերի մամուլի ասուլիսները հազվադեպ էին: Ամենայն հավանականությամբ, դա պայմանավորված էր հետընտրական գործընթացների, մասնավորապես՝ բողոքի ցույցերի, քվեարկության արդյունքների վիճարկման զանգվածային այլ նախաձեռնությունների բացակայությամբ: Ընտրություններին մասնակցած 9 կուսակցություններից ու դաշինքներից միայն 5-ը հետընտրական ասուլիսներ տվեցին: Համեմատաբար ակտիվ էին ՀՀԿ-ն, ՕԲՕ-ն եւ «Ազատ դեմոկրատները»: Իսկ ՀՅԴ-ն, «Ծառուկյան» եւ «Կոնգրես-ՀԺԿ» դաշինքներն ու «Հայկական վերածնունդ» կուսակցությունն առհասարակ հետընտրական ասուլիս չեն ունեցել:

Ասուլիսների տևողության առումով դիտարկման առաջին փուլում առաջատարներն էին «Օհանյան-Բաֆֆի-Օսկանյան» դաշինքը (399 բույս 40 վրկ), ՀՀԿ-ն (309 բույս 5 վրկ) և «ԵԼԲ»-ը (298 բույս 45 վրկ): Սակայն տնտեսական և սոցիալական խնդիրներին հատկացված ժամանակի ծավալով «ԵԼԲ»-ն իր ցուցանիշով (29 բույս 17 վրկ) գերազանցել է ոչ միայն ՕԲՕ-ին (12 բույս 39 վրկ) ու ՀՀԿ-ին (7 բույս 45 վրկ) միասին վերցրած, այլ նաև ընտրություններին մասնակցող մյուս մրցակիցներին:

Երկրորդ փուլում այս առումով նույնպես իրավիճակը միանգամայն փոխվեց. «Օհանյան-Բաֆֆի-Օսկանյան» դաշինքն ակնհայտորեն պասիվացավ և դարձավ հետնապահ, իսկ ՀՀԿ-ն զբաղեցրեց առաջատարի դիրքը: Հանրապետականներին, թեև մոտ 100 բույս զիջելով, հաջորդեցին «Ազատ դեմոկրատները», իսկ վերջիններիս՝ Կոմունիստական կուսակցությունը, որի առաջին փուլի այս ցուցանիշն ամենացածրն էր:

Ընդհանուր առմամբ՝ քարոզարշավի 27 օրերին կուսակցությունների ու դաշինքների ճնշող մեծամասնությունը երկրորդ փուլում բազմակի անգամ ավելի շատ է ուշադրություն դարձրել սոցիալ-տնտեսական խնդիրներին, քան դիտարկման առաջին փուլում: Ընդ որում՝ գրեթե բոլոր քաղաքական ուժերն իրենց ասուլիսներում ավելի շատ խոսել են տնտեսական, քան սոցիալական խնդիրների մասին: Միակ բացառությունը «Ելք» դաշինքն է, որի ներկայացուցիչները դիտարկման երկրորդ փուլի ժամանակ նախապատվությունը տվեցին սոցիալական թեմաներին: Մինչդեռ, առաջին փուլում նրանք գերադասում էին խոսել տնտեսական խնդիրներից, ավելին՝ ելույթների այս բաղադրիչին նվիրված ժամանակի առումով «Ելք»-ն առաջատարն էր:

Իսկ ահա երկրորդ փուլում այդ ցուցանիշով դաշինքին շրջանցել են 6 քաղաքական ուժեր: Ակնհայտ առաջատարն այստեղ Կոմունիստական կուսակցությունն էր, որին հաջորդել են «Ազատ դեմոկրատները», «Ծառուկյան» դաշինքը և «Հայկական վերածնունդը»:

Ավելի շատ տնտեսական, քան սոցիալական հարցերին տեղ տալու միտումը պահպանվեց նաև դիտարկման երրորդ փուլի՝ հետընտրական ասուլիսներին: Ընդ որում՝ այստեղ նույնպես Կոմկուսի եւ «Ազատ դեմոկրատների» ցուցանիշները ավելի բարձր են, քան մյուս ուժերինը:

Ուշագրավ է, որ ՀՀԿ-ի ներկայացուցիչները առաջին փուլի ասուլիսներին շատ քիչ են խոսել տնտեսական թեմաներից (ընդհամենը 7 րոպե 45 վրկ), իսկ սոցիալական խնդիրներին առհասարակ չեն անդրադարձել, ինչը արտառոց էր իշխանությունն իր ձեռքում պահելու հավակնություն ունեցող կուսակցության համար: Բուն քարոզարշավի օրերին հանրապետականները որոշ չափով շտկեցին իրավիճակը, բայց, այդուհանդերձ, նրանց այս ցուցանիշներն ավելի մոտ էին հետնապահներին, քան առաջատարներին: Հետընտրական ասուլիսներին ՀՀԿ-ականները չփոխեցին իրենց սկզբնական մոտեցումը. շրջանցել տնտեսական ու սոցիալական ոլորտների խնդիրները, հնարավորինս չխոսել դրանց մասին:

Ինչ վերաբերում է ելույթների բովանդակությանը, ապա դիտարկման թե՛ առաջին, թե՛ երկրորդ փուլում իշխանական կուսակցությունները ներկայացնող բանախոսներն ավելի շատ փորձել են հիմնավորել իրականացվող քաղաքականությունը, քան վեր հանել խնդիրներն ու առաջարկություններ ներկայացնել: Ընդդիմադիր ճամբարի քաղաքական ուժերն էլ հակառակ՝ ներկա սոցիալ-տնտեսական վիճակը գնահատելով որպես ճգնաժամային, հիմնականում անդրադարձել են առկա խնդիրներին և դրանք արմատապես լուծելու խոստումներ են տվել: Ինչպես և նախորդ ընտրարշավներում, այս անգամ նույնպես չի հաջողվել խուսափել այդ խոստումների և պատկերացումների հռչակագրային բնույթից, և ամենևին էլ միշտ չէ, որ նշվել է, թե ինչպես, ինչ հաշվարկներով և ինչպիսի քայլերի հաջորդականությամբ է հնարավոր հասնել առաջադրված նպատակներին: